



Empowered lives.  
Resilient nations.

ԵՄ/ՄԱԶԾ ծրագիր 00085981

## Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում Հայաստանում

### 1. Ընդհանուր տեղեկություններ և հիմնախնդրի ներկայացում

#### 1.1 Ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին

Հայաստանը դեպի ծով ելք չունեցող փոքր լեռնային երկիր է, որը գտնվում է Հարավային Կովկասում: Հայաստանի տարածքի մոտ 76.5 տոկոսը ծովի մակարդակից 1000-2500 մ բարձրության վրա է: Հայաստանը կլիմայական հակասությունների երկիր է. բարդ ռելիեֆի հետեւանքով նույնիսկ փոքր տարածությունների վրա կարելի է տարբերակել վեց կլիմայական տիպեր՝ ենթահասարակածային լանդշաֆտից մինչև սառնամանիքային բարձրավանդակներ: Ուղղահայաց հերթագայության պատճառով այստեղ ձեւավորվել է լանդշաֆտի 10 գոտի՝ կիսաանապատային տարածքներից մինչև ձյունապատ բարձրավանդակներ: Երկրի տեղադրությունը երեք կենսաաշխարհագրական շրջանների հատման վայրում, կլիմայական պայմանների բազմազանությունը և երկրաբանական ակտիվ գործընթացները հանգեցրել են էկոհամակարգերի և բուսական ու կենդանական աշխարհի՝ բարձր աստիճանի էնդեմիկություն ունեցող տեսակների հարուստ բազմազանության, ինչպես նաև երկիրը դարձրել են բույսերի գենետիկական բազմազանության կենտրոններից մեկը: Հայաստանը ընդգրկված է Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի [ՎԲՀՀ/WWF] «Գլոբալ 200 էկոտարածքներ» ցուցակում և հանդիսանում է «Conservation International» կազմակերպության կողմից որոշված համաշխարհային թեժ կետերից մեկը:

Լեռնային էկոհամակարգերը կարելի է արտադրական ռեսուրս են հանդիսանում երկրի բնակչության համար, որի 50 տոկոսն ապրում է գյուղական բնակավայրերում և դարեր շարունակ կախվածություն ունի էկոհամակարգերի սրամադրած ապրանքներից ու ծառայություններից, որոնք ապահովել են բնակչության բարեկեցությունը և տնտեսության ճյուղերի, ներառյալ՝ գյուղատնտեսության (համախառն ներքին արդյունքի

19 տոկոսը) զարգացումը: Այսուհանդերձ, գյուղական աղքատության դեռևս բարձր մակարդակը, Խորհրդային Միության փլուզումից հետո տեղի ունեցած զգալի տնտեսական անկումը եւ ենթակառուցվածքների քայքայումը, ընթացիկ համաշխարհային ճգնաժամը, պարենի գների բարձրացումը, այս ամենին զուգահեռ՝ կառավարության թույլ ինստիտուցիոնալ կառուցվածքը եւ ազգային ծրագրերի պատշաճ մշակման, իրականացման եւ վերահսկման անբավարար կարողությունները, բնական ռեսուրսների ապօրինի շահագործումը եւ գերօգտագործումը, կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը եւ այլ գործոններ ստեղծում են հանրագումարային ներագդեցություն, որը հանգեցնում է խոցելի կենսատարածքների (հաբիթաթների) եւ տեսակների վերացման, էկոհամակարգերի դեգրադացման (օրինակ՝ հողային ռեսուրսների 82%-ը, ներառյալ՝ վարելահողերը, գտնվում է անապատացման եւ էրոզիայի վտանգի տակ, հողի բերրիությունը եւ արոտավայրերի արտադրողականությունը նվազել են, եւ այլն), էկոլոգիական ֆունկցիոնալության կրճատման եւ էկոհամակարգերի ծառայությունների հարաճուն անապահովության:

Ի հավելումն մարդածին գործոնների ազդեցության, վերջին 100 տարվա ընթացքում կլիմայի փոփոխությունը հանդիսանում է մի լրացուցիչ նշանակալի սպառնալիք արդեն իսկ վտանգված էկոհամակարգերի եւ տնտեսության ճյուղերի համար: Համաձայն ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո ներկայացված Երկրորդ ազգային հաղորդագրության, Հայաստանի տարածքում արդեն իսկ նկատելի է միջին ջերմաստիճանի բարձրացում ( $0.85^{\circ}\text{C}$ ) եւ տեղումների քանակի նվազում (6%) (դիտարկումներն արվել են սկսած 1930 թվականից): սպասվում է, որ մինչեւ 2100 թվականը Հայաստանում կգրանցվի միջին ջերմաստիճանի բարձրացում  $4,8-5,1^{\circ}\text{C}$  աստիճանով եւ տեղումների մակարդակի նվազում 8-24%-ով: Համաձայն կանխատեսումների, առաջիկա 100 տարվա ընթացքում տեղի կունենա հիմնական բնական էկոհամակարգերի գոյություն ունեցող սահմանների ուղղահայաց տեղաշարժ. լեռնային լանդշաֆտների նկարագրին համապատասխան՝ դրանք կբարձրանան 250-300 մետրով: Վերոնշյալը առաջ կբերի էական փոփոխություններ բնական էկոհամակարգերում եւ դրանց տարածքների վերաբաշխում՝ բույսերի եւ կենդանիների որոշակի տեսակների բնական կենսատարածքների հետագա ձեւախեղմամբ: Հիմնավորվել է, որ հատկապես խոցելի վիճակում կհայտնվեն ենթաալպիական եւ ալպիական էկոհամակարգերը (ծովի մակերևույթից մինչեւ 3000 մ բարձրության վրա), որտեղից այդ տեսակները կարող են իսպառ դուրս մղվել: Էական ոչ նպաստավոր փոփոխություններ կարող են տեղի ունենալ նաեւ այլ էկոհամակարգերում. մասնավորապես՝ ծայրահեղ խոցելի են բոլոր տեսակի էկոհամակարգերում առկա անկլավային կետերը, երբ դրանք շրջապատված են գյուղատնտեսական լանդշաֆտով կամ քաղաքային միջավայրով: Ի հետեւանք, կարող է տեղի ունենալ բուսական եւ կենդանական հազվագյուտ տեսակների մի ամբողջ շարքի անհետացում:

Հարկ է նշել, որ Հայաստանում կլիմայի փոփոխությունը զգալիորեն խորացնում է փխրուն լեռնային էկոհամակարգերի վատթարացումը (հողի էրոզիա, արոտավայրերի եւ մարգագետինների արտադրողականության նվազում, անտառների ճկունության եւ

արտադրողականության մակարդակի նվազում): Անտառների կառավարման եւ հողերի օգտագործման վնասաբեր եւ անկայուն ձեւով իրականացումը, գյուղատնտեսություն վարելու՝ շրջակա միջավայրի համար վնասակար աշխատաձեւերը՝ զուգորդված կլիմայի չորացման հետ, հանգեցնում են ածխածնի կլանիչների եւ պահեստարանների քայքայման: Այսպիսով, բնական ռեսուրսների՝ շրջակա միջավայրի համար կայուն կառավարման հասնելը մասամբ կորոշվի Հայաստանի կարողությամբ՝ ստեղծելու կառավարման ռեժիմներ եւ հարմարվողական մեխանիզմներ՝ փոխհատուցելու կլիմայի փոփոխության ազդեցությունները, ներառյալ՝ համակարգային բուֆերների, ածխածնի կուտակումների մոնիտորինգի համակարգի եւ պատշաճ երաշխիքների ստեղծումը:

### 1.2 Ծրագրի քննարկումը

Առաջարկվող ծրագիրը կենտրոնանում է ամենախոցելի եւ ամենավատթար վիճակում գտնվող լեռնային հանդակների (արոտավայրերի եւ մարգագետինների) եւ անտառային էկոհամակարգերի պաշտպանության եւ վերականգնման վրա: Ծրագրի նպատակն է բնապահպանական եւ սոցիալական մտահոգությունները ներգծել վերին ջրբաժանների կառավարման մեջ. այն կօգնի վերականգնել բնական էկոհամակարգերը (արոտավայրեր, անտառներ) եւ ստեղծել նպաստավոր միջավայր՝ անտառների եւ հանդակների (արոտավայրերի) կառավարման՝ շրջակա միջավայրի համար ոչ վնասակար աշխատաձեւերի, ինչպես նաեւ հողագործության արդյունավետ եղանակների որդեգրման համար, որոնք, ակնկալվում է, որ կնվազեցնեն ճնշումը բնապահպանական տեսակետից զգայուն տարածքների վրա եւ կկրճատեն ածխածնի արտանետումները: Ընտրված էկոհամակարգերում աճում է բույսերի 2,000 տեսակ, ներառյալ՝ գյուղատնտեսության ու կենսաբազմազանության տեսակետից կարևոր այնպիսի տեսակներ, ինչպիսիք են կովկասյան խուրման [Diospyros lotus], երեքնուկը [Trifolium], կորնզանը [Onobrychis], առվույտը [Medicago], գազը [Astragalus], գիհին [Juniperus], այլ:

### 1.3 Հիմնախնդրի սահմանումը

Հայաստանում 1,244,000 հա տարածք զբաղեցնող բնական հանդակների ներկա կարգավիճակը ծայրահեղորեն անբավարար է: Մարդածին գործոնները լրջագույն ազդեցություն են ունեցել Հայաստանի արոտավայրերի վրա, եւ խոտհարքների ու մարգագետինների մի հսկայական մասի որակը վատթարացել է: Արոտավայրերի գրեթե կեսը ենթակա է դեգրադացման, եւ դրանց կենսաբանական արտադրողականությունն ընկել է 1.5 – 2 անգամ՝ 1950-ական թվականների համեմատությամբ: Այս հողային ռեսուրսների կառավարումը մինչ օրս եղել է ցածր մակարդակի, ինչը հանգեցրել է արածեցման համար պիտանի տարածքների մակերեսի զգալի կրճատման:

Հայաստանը անտառածածկի առումով աղքատ երկիր է: Համաձայն հողային հաշվեկշռի վերաբերյալ 2006 թվականի տվյալների, անտառային հողատարածքները կազմում են մոտ 373.0 հազար հեկտար, որից 308.5 հազար հեկտարը՝ անտառածածկ (երկրի տարածքի 10.4%-ը): Անտառները հիմնականում աճում են երկրի ողջ տարածքով ձգվող

լեռների գառիթափ լանջերին, 550 - 2,400 մ բարձրության վրա: Այս անտառներում աճում է ծառերի եւ թփերի մոտ 270 տեսակ, ներառյալ՝ էնդեմիկ, ռելիկտային եւ հազվագյուտ տեսակներ:

Մեփականաշնորհմանը հաջորդած ժամանակշրջանում արածելու ռեժիմների փոփոխությունները որոշ տարածքներում հանգեցրել են բուսական բազմազանության կրճատման. արդյունքում նվազել է արածեցումը, բայց, ինչն առավել կարեւոր է, գերարածեցված տարածքներում տեղի է ունեցել տեսակների կենսատարածքների հարաճուն վատթարացում: Գերարածեցումը հանգեցրել է հողերի էրոզիայի, ճահճաշատ տարածքների առաջացման եւ բուսական բազմազանության կրճատման: Օրինակ, չնայած տափաստանային համակարգերում սովորաբար աճում է բույսերի 100-ից մինչեւ 700 տեսակ, բուսական տեսակների քանակը, որոնք կարելի է գտնել ինտենսիվ գերարածեցումից հետո, շեշտակիորեն նվազում է՝ հասնելով մոտ 15-ի: Բուսական աշխարհի հարստության նմանատիպ կրճատումներ նկատվում են մարգագետնային համակարգերում (գերարածեցումից հետո տեսակների քանակի նվազում 125-ից մինչեւ մոտ 25-ի): Գերարածեցումը նաեւ հանգեցրել է տեսակների կազմության փոփոխությունների՝ անասնակեր հանդիսացող արժեքավոր բուսատեսակների պոպուլյացիաների թվի կրճատմամբ եւ մոլախոտերի ու թունավոր տեսակների (ինչպիսիք են գորտնուկը, ուղտափուշը, սողացող իշափուշը, իշակաթնուկը, գազի տարբեր տեսակները) տարածմամբ: Ի հավելումս, մարդկանց կողմից սպառման նպատակով բնական արոտավայրերից դեղաբույսերի որոշակի տեսակների չափազանց մեծ ծավալով հավաքումը այս բուսատեսակները հասցրել է անհետացման եզրին:

Արածեցման ընդունված եղանակները, ինչպես բերքատեսակների աճեցման եղանակները, տնտեսական անցման շրջանի մեկնարկից ի վեր ենթարկվել են հիմնարար ձեւափոխությունների: Տնային տնտեսություններին պատկանող անասնազխաքանակի փոքր միջին չափը, արածեցման կազմակերպված եղանակների քայքայումը, առավել հեռավոր հատվածներում գտնվող արոտավայրեր հասնելու հետ կապված մեծ ծախսերը հանգեցրել են գյուղերի շուրջ գտնվող արոտավայրերի գերօգտագործմանը: Այս տարածքները գերարածեցման հետեւանքով հայտնվել են ծանր ճնշման տակ, մինչդեռ ավելի հեռու գտնվող ամառային արոտավայրերը եւ ալպիական մարգագետիններ մնում են թերօգտագործված վիճակում: Գյուղական արոտավայրերի վրա ճնշումն էլ ավելի է մեծանում գոմերում կերակրման կարճեցված ժամանակահատվածների հետեւանքով, որ կիրառում են գյուղատնտեսները, քանի որ ձմեռային ամիսներին անասնակերը դառնում է համեմատաբար թանկարժեք: Որպես այդ արատավոր շրջանի եւս մեկ «պտույտ»՝ անասնազխի նվազող արտադրողականությունը տնային տնտեսություններին ստիպել է ավելացնել անասունների քանակը, ինչն էլ ավելի է մեծացրել ճնշումը արոտավայրերի վրա: Համայնքային արոտավայրերի մեծ մասը ներկայում գերօգտագործված է եւ ենթակա է

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարություն, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ. «Բնական ռեսուրսների կառավարում եւ աղքատության կրճատում» [Natural resources management and poverty reduction] ծրագիր (2002 թվական):

վատթարացման տարբեր տեսակների՝ սկսած կենսաբազմազանության կրճատումից մինչև վեգետատիվ ծածկույթի փոփոխություններ եւ սարավանջերի էրոզիայի առաջացում:

Ներկա սահմանափակ անտառածածկույթը հետեւանք է մեծամասշտաբ անտառահատումների եւ անտառների դեգրադացման, որ տեղի ունեցան 1990-ական թվականների սկզբի էներգետիկ ճգնաժամի ընթացքում: Անտառվերականգնման ընթացիկ մակարդակը ցածր է: Ապօրինի ծառահատումներ, նույնիսկ վերջին տարիներին խստացված պետական վերահսկողության պայմաններում, դեռեւս տեղի են ունենում: Արժեքավոր ծառատեսակների չկառավարվող ընտրովի հատումը բերում է մնացյալ անտառային զանգվածի դեգրադացման: Անտառային գոտու հատկապես վերին սահմանի երկայնքով անասունների չափազանց արածեցումը կանխարգելում է անտառների բնական վերականգնումը: Անտառների շարունակվող դեգրադացումը առաջացնում է կենսաբազմազանության կորուստ, իսկ անտառների ամբողջականության խաթարումը վնասում է անտառային էկոհամակարգերի՝ հետագա այնպիսի ճնշումներին դիմակայելու եւ վերականգնվելու կարողությանը, ինչպիսիք են կլիմայի փոփոխության առաջացրած բացասական ազդեցությունները: Ավելին, անտառազրկումը կարող է հանգեցնել ջրերի արտահոսքի, ինչն առաջացնում է սողանքների եւ հողի էրոզիայի վտանգներ, կարող է խորացնել ջրուղիների տիղմակալումը, ինչպես նաեւ ստորգետնյա ջրային ռեսուրսների վերականգնման դանդաղեցումը:

#### 1.4 Կլիմայի փոփոխության ազդեցությունը

Համաձայն Համաշխարհային բանկի իրականացրած գնահատման, Հայաստանը կլիմայի փոփոխության առումով Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի ամենազգայուն երկրներից մեկն է: Ջերմաստիճանի բարձրացումը եւ տեղումների քանակի նվազումը արագացնում են անապատացման գործընթացները. դրանք բացասական ազդեցություն են ունենալու այն ճյուղերի վրա, որոնք կախվածություն ունեն կլիմայից եւ բնական ռեսուրսներից: Կլիմայի փոփոխությունը հանգեցնելու է անապատային, կիսաանապատային եւ չորային (արիդ) բաց անտառների տարածքների ընդլայնման՝ վերին սահմանների ուղղահայաց տեղաշարժի հետեւանքով: Ավելին, տեղիկ կունենա տափաստանի տեղաշարժ 250-300 մ դեպի վեր՝ անտառային էկոհամակարգերի ուղղությամբ. միեւնույն ժամանակ անտառային գոտու տեղաշարժը փոքրացնելու է մարգագետնային էկոհամակարգերի տարածքը: Որպես հետեւանք՝ կկատարվեն էկոհամակարգերի կազմության ու կառուցվածքի հսկայական փոփոխություններ: Ավելի քան 17,000 հեկտար անտառ (ընդհանուր անտառային տարածքների 5-5.5%-ը) կարող է անհետանալ անտառի զարգացման համար ոչ նպաստավոր պայմանների պատճառով:

Համաձայն Հայաստանում կլիմայի փոփոխության սցենարների (ՄԱԿ ԿՓՇԿ-ի ներքո երկրորդ ազգային հաղորդագրություն), երկրում հնարավոր են լեռնային հանդակների

և, համապատասխանաբար, արտադրողականության մակարդակների հսկայական փոփոխություններ: Հետևաբար, սպասվում է, որ 4-10 տոկոսով կկրճատվեն արոտավայրային ընդհանուր տարածքները և դրանց արտադրողականությունը: Առավել որոշակիորեն՝ սպասվում է, որ 19%-ով կկրճատվի ենթաալպիական գոտու և 22%-ով՝ ալպիական գոտու ամենաարժեքավոր ու բարձր արտադրողականություն ունեցող արոտավայրերի մակերեսը, ինչպես նաև՝ տեղի կունենա լեռնային հանդակների արտադրողականության նվազում 7-10%-ով: Սպասվում է, որ տեղի կունենա արոտավայրերի բուսականության կառուցվածքում թունավոր, փշոտ բույսերի և մոլախոտերի մասնաբաժնի մեծացում, արոտավայրերի արտադրողականության անկում և խոտի, որպես անասնակերի, որակի նվազում: Ի հետևանք, կգրանցվի անասնազլխաքանակի կրճատում 30%-ով և կաթնատու անասունների արտադրության ծավալների նվազում 28-33%-ով:

Համաձայն ջերմոցային գազերի առաջին ազգային գույքագրման, 1990 թվականին Հայաստանում «Էներգիա» ճյուղը պատասխանատու էր ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների հիմնական մասի համար: Այսուհանդերձ, համաձայն ջերմոցային գազերի երկրորդ գույքագրման, «Էներգիա» ճյուղի արտանետումների ծավալը 1997-2006 ժամանակաշրջանում նվազել է, մինչդեռ հարկ է ընդգծել, որ ջերմոցային գազերի արտանետումները գյուղատնտեսության ճյուղից ունեն աճի միտում: 1990 թվականին արտանետումները «Գյուղատնտեսություն» ճյուղից կազմել են ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր ծավալի 4%-ը, իսկ 1997-2006 թվականներին դրանց ծավալը հասել է ընդհանուրի 17.9%-ին: Արտանետումների և դրանց հեռացման հավասարակշռության կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել «Հողօգտագործում, հողօգտագործման փոփոխություն և անտառտնտեսություն» ճյուղում. 1990 թվականի 736 Գգ ցուցանիշից մինչև +1563.6 Գգ 2000 թվականին, ինչի հիմնական պատճառը եղել է անտառահատումների ծավալի մեծացումը և վարելահողերի ու մարգագետինների որակի կորուստը: Այդ տարիներին անտառտնտեսության ոլորտը զուտ կլանիչից վերածվեց զուտ արտանետողի: Ստորև բերված աղյուսակը ցուցադրում է ջերմոցային գազերի զուտ հոսքերը հողօգտագործման և անտառտնտեսության ճյուղերում 1990 և 2000 թվականներին:

Աղյուսակ 1. Ջերմոցային գազերի զուտ հոսքերը «Հողօգտագործում, հողօգտագործման փոփոխություն և անտառտնտեսություն» ճյուղում, 1990 և 2000 թվականներ, (Գգ CO<sup>2</sup> համարժեք)

Ճյուղային դասակարգումներ	Ջերմոցային գազերի զուտ հոսքեր (ՋԳ CO <sup>2</sup> համարժեք)	
	1990	2000
5. Հողօգտագործում, հողօգտագործման փոփոխություն և անտառտնտեսություն, ընդամենը	-736,0	1 563,6

5A Անտառներ	-837,1	441,0
5A1 Անտառային հողեր, որոնք մնում են անտառային հողեր	-816,4	441,0
5A2 Հողեր, որոնք փոխակերպվել են անտառային հողերի	-20,7	0,0
5B Բերքատու հողեր	-134,0	501,8
5B1 Բերքատու հողեր, որոնք մնացել են այդպիսին	-150,2	501,8
5B2 Հողեր, որոնք փոխակերպվել են բերքատու հողերի	16,2	0,0
5C Հանդակներ	173,4	598,3
5C1 Հանդակներ, որոնք մնացել են այդպիսին	173,4	305,5
5C2 Հողեր, որոնք փոխակերպվել են հանդակների	0,0	292,8
5D Խոնավ հողեր	71,2	27,7
5D1 Խոնավ հողեր, որոնք մնացել են այդպիսին	55,5	28,3
5D2 Հողեր, որոնք փոխակերպվել են խոնավ հողերի	15,7	0,0
5E Բնակատեղիներ	-9,4	-5,2
5E1 Բնակատեղիներ, որոնք մնացել են այդպիսին	-12,5	-5,2
5E2 Հողեր, որոնք փոխակերպվել են բնակատեղիների	3,0	0,0
5F Այլ հողեր	Չի հաշվարկվել	Չի հաշվարկվել
5F1 Հողեր, որոնք փոխակերպվել են այլ հողատեսակների*	Չի հաշվարկվել	Չի հաշվարկվել

\* Համաձայն Գլխային փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ/IPCC) մշակած «Լավագույն աշխատանքային ուղեցույցի» [Best Practice Guidelines], արտանետումները չեն հաշվարկվել այն հողերի դեպքում («Այլ հողեր»), որոնք ենթակա չեն մարդու միջամտությանը:


## 2. Ծրագրի մշակման նպատակը

Ծրագրի մշակման նպատակը բնական ռեսուրսների կառավարման կայուն, շրջակա միջավայրի համար անվնաս աշխատանքային հողերի որդեգրումն է՝ Հայաստանի լեռնային էկոհամակարգերի վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունների ներքո, որպեսզի հնարավոր լինի ապահովել էկոհամակարգերի ամբողջականությունը եւ էկոհամակարգերի ծառայությունների շարունակական մատակարարումը, ներառյալ՝ ածխածնի կլանումը եւ պահուստավորումը: Ծրագրի նպատակներից է արոտավայրերի կառավարման համակարգի ներդրումը, ներառյալ՝ 2000 հա մարգագետինների եւ անտառային գոտիների (60 հա) վերականգնումը ընտրված մարզում: Ծրագիրը կօգնի կասեցնել բնական ռեսուրսների (կենսաբազմազանություն, հողեր, ջրային ռեսուրսներ, անտառներ) հետագա վատթարացումը, խթանել կլիմայի փոփոխության ազդեցություններին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ ընկալումների բարելավումը եւ հարմարվողական կառավարման ներուժը, դրա սոցիալ-տնտեսական կողմը, գյուղատնտեսության արտադրողականությունը եւ պարենային անվտանգությունը, կլիմայի փոփոխության համատեքստում տեղական կարողությունների ընդլայնումը՝ նրանց կենսապահովման

մասկարդակի կայուն պահպանման նպատակով: Ծրագրի արդյունքները սահմանափակված չեն լինի ընտրված թիրախային տարածքով, քանի որ ծրագիրը նախատեսում է որդեգրել կրկնօրինակման ռազմավարություն՝ ձեռքբերված փորձը տարածելու եւ լավագույն աշխատանեղանակները երկրի այլ մարզերում կիրառելու նպատակով:

2.1 Ծրագրի ընդգրկման տարածքը

Գեղարքունիքի մարզն ընտրվել է ծրագրային միջամտություն իրականացնելու նպատակով. մարզի ներսում թիրախային շրջան կլինի Վարդենիսը: Գեղարքունիքի մարզը զբաղեցնում է 5,348 քառ կմ (ներառյալ Սեւանա լճի հայելու մակերեսը, որը կազմում է 1,270 քառ կմ) եւ գտնվում է Հայաստանի Հանրապետության արեւելքում: Մարզի աշխարհագրական բարձրությունը տատանվում է 2,000-ից մինչեւ 3,500 մետրի սահմաններում, իսկ բնակչությունը կազմում է 238,500 մարդ (84%-ը գյուղաբնակ է): Մարզի գյուղական համայնքների ընտրանքը ցույց է տալիս, որ աղքատության տարածվածությունն այստեղ ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերի դեպքում ազգային միջին ցուցանիշը:



Մարզը շրջապատում է Սեւանա լիճը՝ Հայաստանի խոշորագույն ջրային ավազանը, որն ունի բարձր տնտեսական, բնապահպանական եւ մշակութային արժեք (եւ հանդիսանում է աշխարհի ամենաբարձրադիր քաղցրահամ լճերից մեկը. 1,900մ ծովի մակերեւույթից բարձր): «Սեւան» ազգային պարկը (150.1 հազար հա) գտնվում է մարզի տարածքում. պարկի տարածքից 24.9 հազար հեկտարը լճափի հողատարածքներն են: «Սեւան» ազգային պարկում առանձնացվել են հատուկ գոտիներ. պաշտպանության գոտի՝ պաշտպանության խիստ ռեժիմով, հանգստի (ռեկրեացիոն) գոտի եւ տնտեսական գոտի՝ տնտեսական գործունեության համար: «Սեւան» ազգային պարկի այս հատվածները չեն կազմում շարունակական կամ չընդհատվող

գոտիներ (չնայած կոչվում են «գոտիներ») եւ սփռված են պարկի ամբողջ տարածքով մեկ: 3700 հա մակերեսով արգելոցային գոտին բաղկացած է հինգ արգելոցային տարածքներից՝ Արտանիշ, Վարդենիս, Լիճք, Նորատուս եւ Նորաշեն, ինչպես նաեւ տասն այլ պահպանվող տեղամասերից, որոնք 500 մ երկարությամբ ձգվում են խոշոր գետերի ափերի երկայնքով՝ սկիզբ առնելով գետաբերանից: Հանգստի գոտին



զբաղեցնում է ափային տարածքի 4,200 հա: Այն նախատեսված է վերականգնողական (ռեկրեացիոն) եւ առողջապահական նպատակների համար: Տնտեսական գոտու մեջ են մտնում ձկնաբուծության եւ անտառտնտեսության համար նախատեսված տարածքներ: Տնտեսական գոտուն անդրադառնալիս անհրաժեշտ է նշել այն տնտեսական գործողությունների մասին, որոնք իրականացվում են ազգային պարկի թափարգելային (բուֆերային) գոտում, որն անմիջականորեն ազդում է լճի ջրի եւ ափամերձ տարածքների վրա:

Աշխատանքի հնարավորությունների սակավության պատճառով մարզում առկա է բնակչության միգրացիայի բարձր աստիճան (հիմնականում սեզոնային աշխատանքային միգրացիայի տեսքով). այս պատճառով մարզի բնակչության հիմնական մասը ներգրավված է գյուղատնտեսական աշխատանքներում: Արդյունքում, Գեղարքունիքի մարզը գյուղատնտեսական զարգացման առումով հանդիսանում է առաջատար, մասնավորապես՝ անասնապահության եւ անասնապահությունից ստացվող ապրանքների առումով: Լավ է զարգացած նաեւ հացահատիկի ու կարտոֆիլի արտադրությունը: Գեղարքունիքի մարզը հանդիսացել է թարմ ձկան հիմնական մատակարարը Հանրապետության բնակչությանը:

## 2.2 Կենսաբազմազանության արժեքը

Ծրագրի գործողության տարածքն ընդգրկում է բազմազան լեռնային էկոհամակարգեր՝ մարգագետիններ, ռելիկտային անտառներ, լեռնային տափաստաններ, ակվատիկ էկոհամակարգեր, որտեղ կարելի է հանդիպել երկրի կենսաբազմազանության մի հսկայական մասը: Այստեղ պահպանվում է բույսերի 1,600 եւ կենդանիների 330 տեսակ: Այս տարածքում առկա էնդեմիկ եւ չափազանց հազվագյուտ բույսերի ցանկը ներառում է հետեւյալը. Սիբեխ սիբեխսանման [Falcaria falcarioides], Մարգացնծու Ջեղելմեյերի [Peucedanum zedelmeyerianum], Լրջուն Աոնոլդի [Isatis arnoldiana], Ճահճախտ [Eleocharis transcaucasica], Անողնուցուկ [Puccinellia sevagensis], Ջրաովույտ եռատերեւ [Menyanthes trifoliata], Գազ Գյոկչայի [Astragalus goktschaicus], Գազ Շուշիի [Astragalus schuschensis], Քիմոն [Carum komarovii], Մարգացնծու Ջեղելմեյերի [Peucedanum zedelmeyerianum], Անողնուցուկ Գրոսհեյմի [Puccinellia grossheimiana]: Մարզը չափազանց հարուստ է որպես անասնակեր ծառայող բույսերով (հիմնականում հացազգիներ եւ ընդավորներ), ինչը նպաստավոր հիմքեր է ստեղծում անասնապահության եւ անասնաբուծության համար:

Մարզի անտառներն ունեն հսկայական բնապահպանական արժեք: Ռելիկտային գիհու թփուտային անտառները (այդ թվում՝ գիհի բազմապտուղը, գիհի սրաթեփուկը, գիհի սաբինան, գիհի երկարատերեւը) Վարդենիսի շրջանում աճում են ծովի մակերեւույթից 1,950 մ բարձրության վրա եւ կազմում են մարզի անտառային ռեսուրսների 80 տոկոսը (մոտ 2,900 հա): Այստեղ կարելի է հանդիպել կաղնու (արեւելյան կաղնի [Quercus macranthera]) եւ ծառերի ու թփերի այլ արժեքավոր տեսակների, որոնց մի մասն աճում է ափամերձ գոտում: Բացի մարդածին ճնշումներից, Մեւանա լճի ջրի մակարդակի

բարձրացումը լրացուցիչ սպառնալիք է շրջակա անտառային տարածքների համար: Միայն Վարդենիսի շրջանում մինչ օրս ջրի տակ է մնացել 700 հա անտառ:

Խիստ մտահոգություն առաջացնող ողնաշարավոր կենդանիների թվում են էնդեմիկ ձկների երեք տեսակներ: Էնդեմիկ իշխանի որոշ ենթատեսակներ անհետացման վտանգի տակ են եւ ներկայում Սեւանա լճի ջրի մակարդակի նվազման եւ չափազանց մեծ ծավալներով ձկնորսության հետեւանքով գործնականում անհետացել են (Սեւանի իշխանը [Salmo ischchan], Բոջակը [S. ischchan danilewskii] եւ Ամառային բախտակը [S. ischchan aestivalis]), իսկ Գեղարքունիի [S. ischchan gegarkuni] պոպուլյացիաները ներկայում պահպանվում են արհեստական բուծման միջոցով: Սեւանի բեղլուի [Barbus lacerta goktschaicus] քանակները նվազել են Սեւանա լճում տեղի ունեցած փոփոխությունների հետեւանքով (որոնք հանգեցրել են կենսատարածքների կորստի), եւ այս ձկնատեսակն այսօր գրանցված է Հայաստանի «Կարմիր գրքում»: Հայաստանի Հանրապետության այս մարզը ջրլող եւ ճահճային թռչունների միգրացիայի միջանցքներից մեկն է, որոնք Տիգրիսի եւ Եփրատի դաշտավայրից, ինչպես նաեւ Կենտրոնական Աֆրիկայի եւ Փոքր Ասիայի լճերից եւ ծովափային գոտիներից թռչում են հյուսիսի ուղղությամբ: Բազմաթիվ թռչնատեսակներ, որոնք նախկինում բնավորվել են Գիլլի լճի երբեմնի տարածքում (Սեւանա լճին կից), յուրաքանչյուր տարի որպես չվող թռչուններ դեռեւս նկատվում են ծրագրի թիրախային տարածքում եւ բնավորվում են նպաստավորության տեսակետից երկրորդ լավագույն կենսատարածքներում: Դրանցից ամենակարեւորներն են. Վարդագույն հավալուսնը [Dalmatian pelican] եւ Փոքր ձկնկուլը [Great white pelican], Քաջահավը [Glossy ibis], Մարգահավը [Corn crane], Տափաստանային ծիխառակոցարը [Black-winged pratincole], Սպիտակապոչ եղյուրիկը [White-tailed lapwing], [Sociable lapwing], Ճախրուկը [White-headed duck], Սպիտակաաչք սուզաբադը [Ferruginous pochard], Կարմրախածի սագը [Red-breasted goose], Ծվվան սագը [Lesser white-fronted goose], Սպիտակապոչ արծիվը [White-tailed eagle], Գաճաճ արծիվը [Booted eagle], Կրկնակոցարը [Great snipe], Մոխրաայտ սուզակը [Red-necked grebe], Մեծ ձկնկուլը [Great cormorant], Մոխրագույն կռունկը [Common crane], Սպիտակ փոքր տառեղ [Little egret], Մեծ ջրցուլը [Great bittern], Սովորական ֆլամինգոն [Greater flamingo], [Collared pratincole], Բզակտուցը [Pied avocet], Ունացուպիկը [Black-winged stilt], Կոցար կաչաղակը [Eurasian oystercatcher], Հայկական որորը [Armenian gull], եւ այլն:

### 2.3 Հիմնական խնդիրները

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, ափամերձ գոտու անտառների ջրածածկումը կառավարության՝ Սեւանա լճի ջրի մակարդակը վերականգնելուն ուղղված ջանքերի արդյունքում, ինչպես նաեւ գյուղական

բնակչության շրջանում տարածված աղքատության առաջացրած հարաճուն ճնշումը բնական պաշարների վրա: Հողերի դեգրադացման հիմնական խթանները հայտնի են. չկանոնակարգված արածեցում, հողերի սխալ մշակում, ջրային ռեսուրսների անարդյունավետ կառավարում եւ ոռոգում, անտառազրկում, ինչպես նաեւ ենթակառուցվածքների ընդլայնում եւ հանքարդյունաբերական գործունեություն: Վերոնշյալը հանգեցնում է հողում օրգանական նյութերի եւ սննդանյութերի հսկայական չափով կրճատման, հողի ուժասպառության՝ դրա քիմիական եւ ֆիզիկական հատկանիշների փոփոխության հետեւանքով, հողերի անկայունության, ջրերի արտահոսքի մեծացման եւ այսպես շարունակ:

Չափազանց մեծ ծավալով ջրօգտագործման հետեւանքով Մեւանա լճի ջրի մակարդակը իջել է 19.6 մետրով: Լճի ջրի ներկա մակարդակը 1,901 մ է: Լճի ջրի ծավալը նվազել է 58.5 մլրդ խորանարդ մ-ից մինչեւ 33.0 մլրդ խորանարդ մ, եւ լճի հայելու մակերեսը կրճատվել է՝ 1,416 քառ. կմ-ից հասնելով 1228.1 քառ. կմ-ի: 1949-ից 1962 թվականներին ինտենսիվ ջրանետքը պատճառ հանդիսացավ լճի ջրի մակարդակի նվազման 13 մետրով (տարեկան 1 մ):

Կլիմայի փոփոխությունը լրացուցիչ ներգործություն է ունենում հողերի դեգրադացման վրա: Բնական հանդակները եւ արոտավայրերը անասնաբուծության զարգացման եւ կենսաբազմազանության պահպանման գլխավոր հիմքն են: Ինչպես նշվեց վերը, կլիմայի փոփոխության սցենարների համաձայն, կրճատվելու են Հայաստանի արոտավայրերի ընդհանուր մակերեսը եւ ստացված բերքի ծավալները, ինչպես նաեւ հնարավոր է հանդակներից ստացվող բերքի նվազում, ինչը, իր հերթին, կհանգեցնի անասնակերի արտադրության ծավալների կրճատման: Հաշվարկվել է, որ եթե պահպանվի խոշոր եւ մանր անասունների գլխաքանակի աճի ներկա տեմպը, հիմնվելով արոտավայրերի բեռնվածության ժամանակակից գիտական նորմերի վրա, մինչեւ 2030 թվականը անասնակեր հանդիսացող պաշարների առկայությունը մտահոգություն չի առաջացնի: Այսուհանդերձ, քանի որ արածեցման նորմերին եւ ստանդարտներին չհետեւելու արդյունքում արոտավայրերի մեծամասնության ընդհանուր վիճակն ակնհայտորեն անբավարար է, եւ եթե չձեռնարկվեն դրանց վիճակի բարելավմանն ուղղված համապատասխան միջոցներ, դրանց վատթարացումը կարագանա: Մարզի տեսակետից մեկ այլ կարեւոր հանգամանք, որ հարկ է հաշվի առնել, ջրային պաշարների խոցելիությունն է: Մեւանա լճի համար կանխատեսվող սցենարները, պայմանով, որ պահպանվում են ջրառի եւ ջրի ներհոսքի ներկա ծավալները, ցույց են տալիս, որ տեղի կունենա ավազանի գետերի փաստացի ընդհանուր հոսքի նվազում. 12%-ով՝ 2030 թվականին, 26%-ով՝ 2070 թվականին, եւ 41%-ով՝ 2100 թվականին: Մա հսկայական փոփոխություններ կառաջացնի ոչ միայն լճի էկոհամակարգում, այլ նաեւ կազդի ողջ տարածաշրջանում կլիմայի ձեւավորման եւ ջրային բալանսի վրա:

Ակնհայտ է, որ ուժասպառված հողային կառուցվածքը, գերարածեցման ենթարկվող բուսականությունը եւ անտառների դեգրադացումը նաեւ շարունակում են կրճատել

ածխածնի կլանման կարողությունները: Ինչպես նշվել է, ավամերձ գոտու մոտ 700 հա մակերեսով անտառ հայտնվել է ջրի տակ: Հաշվի առնելով ջրերի էվտրոֆիկացման գործընթացների ինտենսիվացման վտանգը, ներկայում իրականացվում է պետական ծրագիր, որի նպատակն է լճից հեռացնել ջրածածկ ծառերը. այսուամենայնիվ, մաքրվել է ընդամենը 270 հա տարածք: Հիմնվելով փայտանյութում ածխածնի կոնցենտրացման միջին չափի վրա (0.5 տ/խորանարդ մ), կարելի է հաշվել, թե որքան կկազմի CO<sub>2</sub>-ի արտանետումների<sup>2</sup> ընդհանուր ծավալը 9000 տ փայտանյութի ջրածածկման հետևանքով: Ակնհայտ է, որ չնայած էվտրոֆիկացման երեւոյթի, ջրածածկ փայտանյութից դրա նեխման հետևանքով տեղի ունեցող մեթանի արտանետումները կլինեն շատ ավելի մեծածավալ: Համաձայն կառավարության որդեգրած օրակարգի, ակնկալվում է 500 հա մակերեսով անտառային գոտու վերականգնում, ինչը կապահովի 7000 տ ածխածնի կլանում<sup>3</sup>:

Գոյություն չունեն ճշգրիտ տվյալներ այն մասին, թե որքան է ավելացել արտանետված ջերմոցային գազերի ծավալը արոտավայրերի/հանդակների՝ Հայաստանում գրանցված դեգրադացման պատճառով: Այնուամենայնիվ, առկա է փորձագիտական գնահատում<sup>4</sup>, համաձայն որի՝ Վարդենիսի շրջանի հողերում ածխածնի ընդհանուր ծավալը կազմում է 203 մլն խոր. մ CO<sub>2</sub>: Այս ցուցանիշը հատկապես հետաքրքրական է Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր մակարդակի համեմատությամբ (առ 2000 թվականը, չհաշված Հողօգտագործումը, հողօգտագործման փոփոխությունը եւ անտառտնտեսությունը). այն կազմում է 6634.89 ՋԳ CO<sub>2</sub>-ի համարժեք, իսկ Հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության եւ անտառտնտեսության հատվածը ներառելու դեպքում՝ 1563.6 ՋԳ CO<sub>2</sub>-ի համարժեք: Ավելին, կիրառելով ԿՓՓՄԽ մոդելավորման համակարգը, հենվելով այն տարբերակի վրա, որ հնգամյա ժամանակահատվածում հաջողությամբ կվերականգնվեն 2000 հա լրջորեն դեգրադացված արոտավայրեր, եւ կկարգավորվի արածեցման ռեժիմը, հնարավոր կլինի հասնել հողում ածխածնի կլանման աճի՝ 14,250 տ ածխածին չափով<sup>5</sup>: Հենվելով համանման մոտեցման վրա, հնարավոր կլինի հասնել բուսականության մեջ ածխածնի կլանման աստիճանի աճի՝ 9,200 տ-ով, ելնելով կլանման աստիճանի ԿՓՓՄԽ բազային արժեքից (9.2 տ/հա) եւ երեք տարվա ընթացքում տարեկան 50 տոկոսով աճից: Անտառների համակարգը նույնպես կշահի արոտների կարգավորումից, քանի որ անասունները հաճախ ռելիկտային գիհու թփուտային անտառների բաց տարածքներն

<sup>2</sup> Հաշվի չի առնվում տարեկան գուտ ավելացման գործակիցը (Հայաստանում 1.86 խոր.մ/հա-ից մինչեւ 2.73 խոր.մ/հա՝ կախված անտառի տեսակից):

<sup>3</sup> Հաշվարկը կատարվել է 15-ամյա ժամանակահատվածի հիման վրա՝ ելնելով 30 խոր.մ/հեկտար միջին ծավալից:

<sup>4</sup> Ն. Գուլզադյան [N. Gulzadyan] (2000). «Վարդենիսի շրջանում հողի հատկանիշները եւ հողում ածխածնի ծավալի հաշվարկը» [Soil characteristics and calculation of carbon amount in soils of Vardenis district]. UNDP/GEF/ARM 99/G41/A/1G/99 ծրագրի նյութեր:

<sup>5</sup> Հաշվարկը կատարվել է ԿՓՓՄԽ մոդելի հիման վրա (2006 թվական). 30%-ի կորուստ ԿՓՓՄԽ բազային ցուցանիշ (95 տ/հա) վատթար պայմանների համար, սառը ջերմաստիճանի դեպքում - \* 0.25 (հողում ածխածնի կլանման աստիճանի աճ 25%-ով հինգ տարվա ընթացքում, որտեղ արածեցման պատճառով ճնշումը նվազեցվել է եւ վերականգնումն ավարտվել է)\* 2000 (վերականգնված տարածքների քանակը):

օգտագործում են արածելու համար, ինչպես նաև՝ անտառային տարածքների միջով անցնում արածելու մի քանի ուղիներ: Հետևաբար, գոյություն ունի ածխածնի հեռացման հավելյալ ներուժ՝ անտառների պակաս դեգրադացման շնորհիվ: Այն բանից հետո, երբ 60 հա վերականգնված անտառ կմտնենա հասունության աստիճանի, ածխածնի կլանումը վերոնշյալ փայտանյութի զանգվածում կհասնի մոտավորապես 1,800 տ ածխածնի ծավալի:

#### 2.4 Ծրագրի նպատակը եւ օգուտները

**Ծրագրի նպատակն** է պահպանել լանդշաֆտը, էկոհամակարգերի բազմազանությունը եւ ամբողջականությունը Հայաստանի լեռնային հատվածներում՝ համայնքային ռեսուրսների կառավարման հարակայուն, շրջակա միջավայրի համար անվնաս աշխատանքայինների եւ կենսաբազմազանության պահպանմանն ուղղված ծրագրերի մշակման եւ առաջնորման, խոցելի անտառային եւ արոտավայրային էկոհամակարգերի օրինակով անբարենպաստ կլիմայական պայմանների ազդեցության մեղմումը ցուցադրելու միջոցով՝ միեւնույն ժամանակ ապահովելու համար պարենի ապահովման եւ գյուղատնտեսական գործունեության նպատակով էկոհամակարգերի ծառայությունների հարատեւությունը:

Մշակվել է ծրագրային երկու կոնկրետ ենթանպատակ. ա) կլիմայի փոփոխության պայմաններում բարելավել լեռնային հանդակներում եւ անտառային էկոհամակարգերում առկա կենսաբազմազանությունը պահպանելու ինստիտուցիոնալ եւ անհատական կարողությունները եւ ընդլայնել գյուղական համայնքներում կենսաապահովման մակարդակը, եւ բ) օժանդակել գործողությունների մշակմանը եւ իրականացմանը, որոնք ուղղված կլինեն կլիմայի ապագա փոփոխությունների նկատմամբ էկոհամակարգերի եւ տեղական համայնքների դիմադրողականության եւ ճկունության ընդլայնմանը՝ ընտրված մարզում արոտավայրերի եւ անտառների կառավարման հարակայուն, շրջակա միջավայրի համար անվնաս աշխատանքայինների ներդրման միջոցով:

**Ծրագրի խնդիրն** է ցուցադրել Հայաստանի լեռնային արոտավայրերում եւ անտառներում բնական ռեսուրսների կառավարման մի մոդել, որը մեծացնում է էկոհամակարգերի կարողությունը՝ սպասվող կլիմայական մտահոգիչ նշանների պայմաններում կլանել ածխածին՝ միեւնույն ժամանակ պահպանելով կենսաբազմազանությունը եւ տնտեսական արժեքները: Ծրագրի շրջանակում կփորձարկվի արոտավայրերի կառավարման մի համակարգ, ներառյալ՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանի (ենթամարզի) 2,000 հա արոտավայրերի եւ 60 հա անտառային գոտու վերականգնումը: Ծրագիրը կօգնի կասեցնել բնական ռեսուրսների (կենսաբազմազանություն, հողեր, ջրային ռեսուրսներ, անտառներ) հետագա վատթարացումը, իրանել կլիմայի փոփոխության ազդեցություններին առնչվող հիմնախնդիրների եւ դրա սոցիալ-տնտեսական կողմի (օրինակ՝ գյուղատնտեսության

արտադրողականության եւ պարենային անվտանգության) վերաբերյալ ընկալումների բարելավումը:

Համաձայն գնահատումների, հանդակների վերականգնման արդյունքում 14,250 տ ածխածին չափով կավելանա հողում ածխածնի կլանման մակարդակը (SOC): Հենվելով համանման մոտեցման վրա, հնարավոր կլինի հասնել բուսականության մեջ ածխածնի կլանման աստիճանի (CVEG) աճի՝ 9,200 տ ածխածնով, ելնելով կլանման աստիճանի ԿՓՓՄԽ բազային արժեքից (9.2 տ/հա) եւ երեք տարվա ընթացքում տարեկան 50 տոկոսով աճից: Անտառների համակարգը նույնպես կշահի արոտների կարգավորումից, քանի որ անասունները հաճախ ռելիկտային գիհու թփուտային անտառների բաց տարածքներն օգտագործում են արածելու համար, ինչպես նաեւ՝ անտառային տարածքների միջով անցնում արածելու մի քանի ուղիներ: Հետեւաբար, գոյություն ունի ածխածնի հեռացման հավելյալ ներուժ՝ անտառների պակաս դեգրադացման շնորհիվ:

Ի հավելումն, այս ծրագիրը նպաստելու է մի քանի գլոբալ բնապահպանական օգուտների ապահովմանը: Առաջնդելով Հայաստանի կենսաբազմազանության պահպանումը, ծրագիրը կօգնի պաշտպանել ՎԲՀՀ-ի [WWF] «Գլոբալ 200 էկոտարածքների» «Conservation International» կազմակերպության կողմից որոշված համաշխարհային թեժ կետերից մեկի մի մասը: Ծրագիրը դրական ազդեցություն կունենա համաշխարհային կարեւորություն ունեցող այնպիսի կենսատարածքների պաշտպանության առումով, ինչպիսին է ցածր եւ միջին լեռնային տափաստանների, բարձրլեռնային ենթաալպյան գոտու բուսականությունը՝ անհետացման վտանգի ենթակա եւ էնդեմիկ բազմաթիվ տեսակների համար: Ծրագիրն իր նպաստը կբերի կլիմայի փոփոխություններին դիմագրավելու համաշխարհային ջանքերին՝ խոցելի լեռնային լանդշաֆտների հողերի հարակայուն, շրջակա միջավայրի համար անվնաս կառավարման խթանման եւ դրանց՝ ածխածին կլանելու կարողությունների ընդլայնման միջոցով:

### **3. Ծրագրի գործողությունները**

*Գործողություն 1: Թիրախային տարածքի պաշարների գույքագրում եւ խոցելիության գնահատում, որոնց արդյունքում կվճակվեն արոտավայրերի եւ անտառի վերականգնման սյաններ*

Ծրագրի տարածքի փորձնական վայրերի եւ հարակից համայնքների ընտրությունը կիրականացվի սկզբնական շրջանում: Պետք է ապահովել, որ պիլոտային տարածքների համար մշակվեն հստակ չափանիշներ, ըստ որոնց Վարդենիսի տարածաշրջանում կընտրվեն հստակ ծրագրերի փորձնական վայրերը: Այդ չափանիշները իրենց շարքում ի թիվս այլ գործոնների, պետք է ընդգրկեն նաև կլիմայի փոփոխության հետ կապված գործոններ /ինչպիսիք են օրինակ ածխածնի կլանման ներուժը, ինդիկատիվ տեսակների առկայությունը, եւ այլն), որպեսզի հնարավոր լինի

ցուցադրել կլիմայի փոփոխության որոշակի արդյունքների հետ կապված գլոբալ բնապահպանական օգուտները:

Ծրագիրը կիրականացնի ռեսուրսների գույքագրում թիրախային տարածքներում եւ ընտրված արոտավայրերի եւ անտառային էկոհամակարգերի խոցելիության նկարագրերի կազմում: Կմշակվեն նաեւ ընտրված տարածքներում էկոհամակարգերի դեգրադացման մարդածին եւ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված հետեւանքների սոցիալ-տնտեսական եւ բնապահպանական ուսումնասիրություններ: Կկազմակերպվեն մասնակցային ժողովներ, որոնցում կներգրավվեն տեղական համայնքի ներկայացուցիչները եւ կհամաձայնեն ստանձնել դերեր եւ պարտականություններ վերականգնման եւ կառավարման ամենաիրագործելի եւ բնապահպանական առումով ամենավստահելի վերականգնման եւ կառավարման ծրագրեր իրականացնելու մեջ:

Կիրականացվի նաեւ զարգացման ազգային/տեղական ռազմավարությունների եւ գյուղատնտեսության ոլորտում կենսաբազմազանությանը եւ կլիմայի փոփոխությանը վերաբերող ծրագրերի միջեւ բացերի ուսումնասիրություն (Gap analysis): Մարզային/տեղական ոլորտային քաղաքականությունների եւ ծրագրերի վերաբերյալ կտրամադրվի առաջարկների եւ լրամշակումների փաթեթ՝ կլիմայի փոփոխության հետ կապված հարցերը վեր հանելու եւ համապատասխան պետական մարմիններին ներկայացնելու նպատակով:

Թիրախային խոտհարքներում եւ վերականգնված անտառներում ածխածնի մակարդակը կանխատեսելու, վերահսկելու եւ վերլուծելու համար ծրագիրը կնախանջի ՋԳ (ջերմոցային գազերի) գնահատման մեթոդաբանություններ եւ կմշակի տեղանքում դրանց կիրառման պլան: Ծրագիրը սերտորեն կհամագործակցի այլ կառույցների հետ եւ կօգտագործի ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի (ՄԱՋԾ)/Գլոբալ էկոլոգիական ֆոնդի (ԳԷՖ) աջակցությամբ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Երրորդ ազգային հաղորդագրության պատրաստման ընթացքում ձեռք բերված ՋԳ գույքագրման ազգային փորձը եւ խոցելիության գնահատման գործիքները:

Դաշտային ուսումնասիրություններին կհաջորդի փաստաթղթերի, պլանների, գույքագրման եւ քարտեզագրման վերանայումը: Դաշտային աշխատանքները կներառեն. տեղանքի տեսողական գնահատում, հողի փորձանմուշների անալիզ, բուսականության կազմի գնահատում, արտադրողականության եւ որակի գնահատում՝ ֆերմերային տնային տնտեսությունների կողմից անասնակերի նկատմամբ պահանջարկի տեսանկյունից, ճանապարհների եւ ջրային ռեսուրսների, անտառածածկի, դրա կառուցվածի ու բաղադրության քարտեզագրում, խորհրդակցություններ անտառտնտեսության մարմինների եւ գիտական հաստատությունների հետ:

2000 հա արոտավայրերի վերականգնման տեխնիկական ծրագրերի մշակումը կարվի արոտավայրերի կառավարման առկա պլանների եւ դաշտային ուսումնասիրությունների հիման վրա: Պլանավորման գործընթացին իրենց աջակցությունը կցուցաբերեն տեխնիկական փորձագետները, ինչպես նաեւ կանցկացվեն մասնակցային խորհրդակցություններ ֆոկուս խմբերի, այդ թվում՝ արոտավայրերի տեղացի օգտագործողների, տեղական եւ մարզային իշխանությունների եւ մասնագիտացված հաստատությունների հետ: Կառավարման պլանները մշակելու նպատակը պետք է լինի առաջադրել տարբերակներ հետեւյալի համար. ա) բարձրացնել անասնակերի արտադրության որակական եւ քանակական մակարդակները, բ) նվազեցնել գերարածեցված եւ դեգրադացված տարածքների նկատմամբ բացասական ազդեցությունը, գ) վերականգնել արտադրողական հզորությունը եւ ապահովել ռեսուրսների կենսակայուն կառավարում: Կառավարման պլանները պետք է սահմանեն մոնիտորինգի պլան եւ առանցքային ցուցանիշներ:

Նմանատիպ մոտեցում պետք է կիրառվի անտառների վերականգնման եւ կառավարման առաջարկները մշակելիս եւ դրանց նպատակը պետք է լինի բարձրացնել խոցելի լեռնային անտառների դիմացկունությունը կլիմայի փոփոխության նկատմամբ: Ծրագրի մեկնարկին տեղանքի ուսումնասիրության հիման վրա կգծագրվեն վերականգնվելիք անտառների սահմանները: Կորոշվի՝ արդյոք միայն բնական անտառների վերականգնման վրա կկենտրոնանա ծրագիրը, թե համայնքային հողերի վրա կստեղծվեն նոր անտառային տարածքներ:

Կմշակվեն կենսակայուն արոտավայրերի եւ համայնքային անտառների կառավարման ուսուցողական ծրագրեր եւ կմատուցվեն համայնքներին, ազգային պարկի անձնակազմին, գյուղատնտեսական օգնության ծառայություններին ու մարզային իշխանություններին:

### *Գործողություն 2. Վերականգնման ծրագրերի իրականացում*

Անտառների եւ արոտավայրերի վերականգնման տեխնիկական պլանները մշակվելուց հետո անմիջապես կյանքի կկոչվեն: Անտառների վերականգնումը նախատեսում է 60 հա դեգրադացված անտառային տարածքների ռեգեներացիա կամ նոր անտառների (տեղի ծառատեսակներով) տնկում համայնքային հողերում, որպեսզի անտառածածկը մեծանա եւ բարձրանա վտանգների նկատմամբ դիմացկունությունը: Ծրագրի սկզբնական փուլում կդիտարկվի և կգնահատվի թիրախային շրջանում տնկարանի հիմնման / տեղական տեսակների համար/ աջակցության հնարավորությունը:

Մարգագետինների վերականգնման պլանը նման կլինի այլընտրանքային արոտավայրերի մոդելին:



Լանդշաֆտի վերականգման գործողությունները ներառելու են. 1) Հայանտառ ՊՈԱԿ<sup>6</sup>, - ի, ազգային պարկի (եթե այդպիսին կա), գյուղատնտեսական ծառայությունների եւ շրջակա համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը որպես խորհրդատվական մարմիններ, 2) համայնքները կլինեն գործողությունների արդյունքների շահառուները եւ անտառվերականգման եւ լանդշաֆտի վերականգման գործողությունների հիմնական գործընկերները 3) անտառվերականգման փորձագետները կալանավոր, կուղղորդեն եւ կվերահսկեն անտառվերականգման գործողությունները:

### Գործողություն 3. Ածխածնի մակարդակի գնահատում.

Կմշակվի ՋԳ մոնիտորինգի կայուն համակարգ, ածխածնի վերաբերյալ տվյալները հասանելի կդառնան ծրագրից առաջ, ընթացքում եւ դրանից հետո: Կլիմային վերաբերող տվյալների պարբերական հավաքագրումը կօգնի բացահայտել, թե մարգագետնային տարածքներ ունեցող համայնքները ինչ ազդեցություն կկրեն կլիմայի փոփոխությունից, այսինքն՝ ջերմաստիճանի, տեղատվության փոփոխության եւ կլիմայական արտակարգ երեւոյթների վատթարացման արդյունքում ինչ ֆիզիկական եւ կենսաբանական փոփոխություններ տեղի կունենան: Այս դիտարկմամբ եւ կանխատեսմամբ կդրվի արձագանքի պատշաճ գործողությունների պլանավելու եւ դրանք արոտավայրերի կառավարման ընթացիկ գործողությունների մեջ ներառելու հիմք:

Ծրագրի արդյունքները լայնորեն կհրապարակվեն երկրում եւ միջազգային մասնագիտական ամսագրերում: Հայաստանի այլ մարզերի եւ շրջանների համայնքների հետ փորձի փոխանակման ու դասընթացների շնորհիվ կզարգանան կլիմայի փոփոխության հարցերը լանդշաֆտի վերականգման ծրագրերի մեջ ներառելու նրանց կարողությունները, որոնց արդյունքում կստեղծվի այդ գործողությունները հետագայում կրկնելու բավարար հիմք:

### 3. Ծրագրի արդյունքների եւ ռեսուրսների շրջանակ

---

<sup>6</sup>«Հայանտառ» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը պետական մարմին է, որը կառավարում է Հայաստանի անտառները եւ գտնվում է Գյուղատնտեսության նախարարության ներքո:

**Ծրագրի նպատակ**  
 Ծրագրի նպատակն է ցուցադրել լեռնային արոտավայրերում ու անտառներում բնական ռեսուրսների կառավարման այնպիսի մոդել, որի շնորհիվ բարձրանում է էկոհամակարգերի կարողությունը կլանելու ածխածինը կլիմայի փոփոխության պայմաններում եւ միեւնույն ժամանակ պահպանելու կենսաբազմազանության եւ տնտեսական իրենց արժեքները

Ծրագրի բաղադրիչներ	Սպասվող վերջնական արդյունքներ	Սպասվող անմիջական արդյունքներ	Ստուգիչ ցուցանիշներ	Գումար
<p>Պետական կառավարման մարմինների եւ համայնքների կարողությունները եւ գիտելիքները կլիմայի փոփոխման պարագայում լեռնային արոտավայրերի եւ անտառային էկոհամակարգերի կենսակայուն օգտագործման եւ կառավարման մասին ծառայելու եւ էկոհամակարգերի ծառայությունների պահպանմանը՝ հանուն գյուղական համայնքների կենսապահովման:</p>	<p>1.1. Գյուղական համայնքները հստակ պատկերացնում են, թե որոնք են արոտավայրերի կենսակայուն կառավարման ներկայիս վտանգները ու դրանց մեղմման միջոցառումները</p>	<p>Բացասական խթանները բացահայտվել եւ գնահատվել են ռեսուրսների դաշտային գույքագրման եւ մանրակրկիտ սոցիալ-տնտեսական եւ ընտրված արոտավայրերի ու անտառային էկոհամակարգերի խոցելիության ուսումնասիրությունների միջոցով</p>	<p>- Մշակվել են ընտրված համայնքների խոցելիության նկարագրեր</p> <p>- Տեղական մակարդակում որոշումներ ընդունողների եւ համայնքի համար անցկացված դասընթացների թիվը</p> <p>անդամների թիվը, ովքեր ստացել են կլիմայի փոփոխության վտանգների ու դրանց մեղմման պրակտիկայի մասին գիտելիքներ</p> <p>- Առնվազն երեք համայնքում կլիմայի փոփոխության ռիսկերը ներառված են միջնաժամկետ զարգացման ծրագրերի մեջ</p>	<p>\$221,000</p>
	<p>1.2. Արոտավայրերի եւ լեռնային</p>	<p>Ինստիտուցիոնալ կարիքներն ու</p>	<p>- Ինստիտուցիոնալ կարիքների</p>	

	<p>անտառների էկոհամակարգերի վերականգման ու պլանավորման ու իրականացման ինստիտուցիոնալ դերերի եւ պարտականությունների սահմանում</p>	<p>բացերը պարզվել են ուսումնասիրությունների, փորձագիտական հետազոտությունների ու մասնակցային հանդիպումների միջոցով</p> <p>Հետազոտությունների արդյունքները ստուգվել են ընտրված համայնքներում մասնակցային հանդիպումների միջոցով</p>	<p>հետազոտություններ են մշակվել եւ առաջարկներ են ներկայացվել ազգային եւ տեղական մակարդակներում քաղաքական որոշումներ կայացնողներին,</p> <ul style="list-style-type: none"> <li>- Համապետական, մարզային եւ տեղական մակարդակներում հանրային իրազեկման արշավների, կլոր սեղան քննարկումների թիվը</li> </ul>	
	<p>1.3 Կենսաբազմազանության պահպանության եւ կլիմայի փոփոխությունների մեղմման հարցերը որոլտային զարգացման ծրագրերի մեջ ներառելու՝ ազգային եւ տեղական կառավարման մարմինների կարողությունների հզորացում</p>	<p>Գյուղատնտեսության ոլորտում ազգային/տեղական զարգացման ծրագրերի բացերի վերլուծություն</p> <p>Կլիմայի փոփոխության հարցերը ազգային/տեղական քաղաքականությունների եւ ծրագրերի մեջ ներառելու հետ կապված առաջարկների ու լրամշակումների փաթեթի մշակում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Գյուղատնտեսության ոլորտում ազգային/տեղական զարգացման ծրագրերի բացերի վերլուծություն է իրականացվել՝ հաշվի առնելով կենսաբազմազանության պահպանության եւ կլիմայի փոփոխության հարցերը</li> <li>- Տեղական մակարդակում ընդունվել են արոտավայրերի կենսակայուն կառավարման նոր քաղաքականություններ եւ ստանդարտներ (ընտրված համայնքներում ՏԻՄ-ի կողմից)</li> <li>- Կլիմայի փոփոխության</li> </ul>	

		Ազգային եւ տեղական մակարդակներում քաղաքական որոշումներ ընդունողների համար դասընթացների մոդուլների մշակում	հարցերի ընկալման եւ ազգային եւ մարզային զարգացման ռազմավարություններում դրանց ներառման կարողությունների գնահատում, առաջարկների տրամադրում - Համապետական եւ տեղական կառավարման մարմինների համար անցկացված դասընթացների թիվը	
2. Աջակցություն արոտավայրերի եւ լեռնային անտառների վերականգնման եւ կառավարման օրինակելի ծրագրերի մշակման հարցում, որոնք ուղղված կինեն կլիմայի փոփոխությանը հարմարվելուն եւ անվտանգությանը պահեստավորելու մակարդակը բարձրացնելուն	2.1. Արոտավայրերը վերականգնվել են, անվտանգ պաշարները մնացել են նույնը եւ մեծացել է դրանց պահեստավորման բնական հնարավորությունը  2.2 Անասնակերի արտադրության մակարդակի բարձրացում թիրախային տարածքներում, որի արդյունքում տեղական համայնքի եղջերավոր անասունների մթերատվությունը կբարձրանա  2.3 Դեզրադացված տարածքների	Արոտավայրերի օգտագործման, այդ թվում դա մշտադիտարկելու ծրագրեր են մշակվել մասնակցային խորհրդակցությունների միջոցով եւ կիրառվել են  Աջակցում, որպեսզի դեզրադացված եւ հատված անտառային տարածքներում բնական ռեգեներացիա տեղի ունենա տեղի բուսատեսակներով  Արոտավայրերի վերականգնումը տեխի է ունենում գյուղական համայնքների եւ մասնագիտացած կառույցների հետ մասնակցային	- Մշակվել եւ հայամքների ավագանիների կողմից հաստատվել են արոտավայրերի կառավարման պլանները  - Ընտրված համայնքներում մշակվել են անտառների վերականգնման եւ կառավարման պլաններ  - Վերականգնվել է 60 հա դեզրադացված անտառ  - Վերականգնվել է 2000 հա արոտավայր	\$660,100

	<p>վրա արածեցման ազդեցությունը կնվազի</p> <p>2.2. Լեռնային անտառների էկոհամակարգերը կվերականգնվեն</p>	<p>սխեմաների միջոցով</p>	<p>- Ծրագրում ներգրավված համայնքի ներկայացուցիչների թիվը</p>	
<p>3. Ածխախնի գնահատում</p>	<p>Ածխածնի պաշարի գույքագրման եւ մոնիտորինգի ազգային շրջանակ է ստեղծվել եւ փորձարկվել</p>	<p>Ծրագրի տարածքում ածխախնի պաշարների գնահատման մեթոդաբանությունը մշակվել եւ կիրառվել է ծրագրի ազդեցության գնահատման մեջ</p> <p>Ածխածնի հաշվառման համակարգ է որդեգրվել</p> <p>Արդյունքների հրապարակում</p>	<p>- Ածխածնի մակարդակի մոնիտորինգի մեթոդաբանություն է մշակվել եւ տեղայնացվել.</p> <p>- Ածխածնի մակարդակի մշտադիտարկման ազգային համակարգ ստեղծելու առաջարկներ են ներկայացվել</p> <p>- Մշակվել է կրկնօրինակման ռազավարություն եւ լավագույ փորձի ու մոտեցումների արդյունքները լայնորեն տարածվել են</p>	<p>239,350</p>
<p>Ծրագրի կառավարում, մոնիտորինգ եւ գնահատում</p>			<p>- Ծրագրի աշխատակազմը մշակել եւ կիրառության է դրել հետեւյալը.</p> <p>- Ծրագրի ընթացիկ պարբերական հաշվետվություններ եւ դրանց ընդգրկումը էլեկտրոնային համակարգերի մեջ</p> <p>- Միջնաժամկետ եւ վերջնական</p>	<p>278,250</p>


			գնահատումների անցկացում, զեկույցների պատրաստում, Եվրահանձնաժողովի (ԵՀ) զեկուցման պայմանների ապահովում - Խորհրդի տարեկան հանդիպումների անցկացում ծրագրի վերջնական արդյունքների վերաբերյալ	
Total				\$1,398,000

Ծրագրի իրականացման ժամկետները՝ Մայիս 2013 – Դեկտեմբեր 2016:

Ծրագրի բյուջեն 1,398,000 ԱՄՆ դոլար, որից – ԵՄ 1,298,700 ԱՄՆ դոլար, ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակ – 100,000 ԱՄՆ դոլար:

#### **4. Իրականացումը**

Ծրագիրը կիրականացվի ազգային իրականացման եղանակով (ԱԻԵ/NIM), որին կմասնակցեն Բնապահպանության եւ Գյուղատնտեսության նախարարությունների ներկայացուցիչները՝ որպես ազգային իրականացնող գործընկերներ եւ ծրագրի ավագ շահառու համապատասխանաբար: Կստեղծի Ծրագրի խորհուրդ (Project Board)՝ որպես կոնսենսուսի վրա հիմնված որոշում կայացնող մարմին: Խորհուրդն ունի ծրագիրը ներկայացնելու գործադիր դեր, ծրագրի տեխնիկական իրագործելիության վերահսկման եւ շահառուների /Գյուղատնտեսության նախարարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ/ համար ծրագրի օգուտների ապահովման դեր: Որպես կանոն, Տեղական Ծրագրերի Գնահատման Հանձնաժողովն (LPAC) այն հարթակն է, որպեղ քննարկվում և հաստատվում է խորհրդի կազմը: Կառավարության գործընկեր մարմինը եւ ՄԱԶԾ-ն պարտադիր կերպով ներկայացված պետք է լինեն խորհրդում (ծրագրի կառավարման ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորեւ):



Ծրագրի իրականացման երաշխավորման /project assurance/ շնորհիվ աջակցություն կտրամադրվի ծրագրի խորհրդին ծրագրի օբյեկտիվ եւ անկախ վերահսկողություն եւ մոնիտորինգ իրականացնելու հարցում, իսկ վերահսկողությունն ու մոնիտորինգը պարտադիր են բոլոր ծրագրերի համար եւ պետք է անկախ լինեն Ծրագրի ղեկավարից: ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի ղեկավարը կստանձնի ծրագրի իրականացման երաշխավորողի դերը եւ կսահմանի ծրագրի կառավարման համապատասխան բազային ցուցանիշները, որոնք պետք է հսկել եւ իրագործել:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակը կաջակցի ծրագրի իրականացմանը՝ համաձայն ՄԱԶԾ կանոնների եւ ընթացակարգերի, ինչպես նաեւ ԵՄ

<sup>7</sup>ՏԻՄ-երի ներկայացուցիչները կընդգրկվեն Կառավարման Խորհրդի կազմում ծրագրի սկզբնական փուլում պիլոտային համայնքների ընտրությունը ավարտելուց հետո



պահանջների: ՄԱԶԾ ազգային գրասենյակը կապահովի ծրագրի հաշվետվողականությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը եւ օգտավետությունը: ՄԱԶԾ-ն պատասխանատու կլինի կորպորատիվ կանոնների եւ ընթացակարգերի համաձայն՝ ծրագիրն իրականացնող գործընկերներին կառավարման եւ իրականացման հետեյալ ծառայությունները մատուցելու համար. ծրագրի վերահսկում, մոնիտորինգ եւ գնահատում, ֆինանսական վերահսկողություն եւ կառավարում, ապրանքների և ծառայությունների գնում, ծախսերի հաստատում, աշխատանքային եւ այլ ծառայությունների գնում, այդ թվում՝ փորձագետների եւ կապալառուների հետ պայմանագրերի կնքում, հանրային տեղեկատվության, ազգային գործընկերների հետ հաղորդակցության հարցում աջակցություն եւ համաֆինանսավորման համակարգում: ՄԱԶԾ-ն կնշանակի ծրագրի համակարգողին վերոնշված խնդիրները իրակացանելու համար: Ծրագրի ամենօրյա գործառնական ընթացքը ապահովելու ուղղությամբ ծրագրի համակարգողին աջակցելու համար կընտրվի Տեխնիկական առաջադրանքի ղեկավար /Technical Task Leader/: Ծրագրի առաջադրանքի ղեկավարի հիմնական պարտականությունը լինելու է ծրագրային փաստաթղթերում նախանշված արդյունքների ապահովումը համապատասխան որակով եւ ժամանակի ու արժեքի նախանշված սահմաններում: Ծրագրի ազգային եւ միջազգային աշխատակազմը կաջակցեն համակարգողին եւ թիմի ղեկավարին ծրագրի գործողություններն իրականացնելու հարցում:

Ծրագրի հաջող իրագործման հիմնական նախապայմանն են քաղաքական պատրաստակամությունն է ու լայնամասշտաբ հանրային աջակցությունը: Դա նշանակում է, որ ազգային այլ կառույցների ներգրավվածությունը նույնպես անհրաժեշտ կլինի: Այս նպատակով կստեղծվի տարբեր շահագրգիռ կողմեր ներկայացնող Ծրագրի խորհրդակցական խորհուրդ, որն ընդհանրական խորհուրդներ կտա ծրագրի իրականացման քաղաքականության եւ երկրում իրագործվող այլ ծրագրերի հետ համադրելիության հարցերի շուրջ: Այլ նախարարությունների, մարզային իշխանությունների, գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների եւ համապատասխան միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին խորհրդակցական խորհրդին միանալու հրավերք կուղարկվի: Խորհրդակցական խորհրդի համանախագահներ կլինեն ծրագիրն իրականացնող գործընկերը եւ ՄԱԶԾ ազգային գրասենյակի ներկայացուցիչը:

Բնապահպանության եւ Գյուղատնտեսության նախարարությունները կստանձնեն ծրագրի իրականացման ամենաառանցքային դերը: Բնապահպանության նախարարությունը, որպես կլիմայի փոփոխության հետ կապված բնապահպանական քաղաքականության եւ կառավարման ազգային պատասխանատու, կհանդիսանա ծրագիրն իրականացնող ազգային գործընկեր: Բնապահպանության նախարարությունը Գյուղատնտեսության նախարարության /որպես գյուղատնտեսական եւ անտառտնտեսության քաղաքականության պատասխանատու / և ՏԻՄ-երի՝ որպես ծրագրի հիմնական շահառուներ, հետ մեկտեղ պատասխանատու կլինեն. ա) ծրագրի

իրականացման անմիջական վերահսկողության, բ) ծրագրի անմիջական արդյունքների ապահովման՝ համաձայն ծրագրի արդյունքների ու ռեսուրսների շրջանակի:

Ծրագիրն ակտիվորեն կաշխատի Գեղարքունիքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական ՀԿ-ների եւ համայնքային կազմակերպությունների, ինչպես նաեւ գիտական հաստատությունների հետ, որոնց ծրագրի իրականացման տարբեր փուլերում կիրավիրեն համագործակցության: Շահագրգիռ այլ խմբեր նույնպես հրավերք կստանան մասնակցելու ծրագրի շրջանակներում սեմինարների, կոնֆերանսների եւ թիրախային դասընթացների:

## 6. Ռիսկեր

Ռիսկի նկարագրություն	Ազդեցության մակարդակը	Արձագանք
Համայնքները առաջնահերթ չեն համարում բնական ռեսուրսների կենսակայուն օգտագործումը կամ բավարար հետաքրքրություն չեն դրսևորում ծրագրում մասնակցելու համար:	Միջին	Թիրախային բնակչությունն ընտրելու եւ նրա հետ կապ հաստատելու թափանցիկ գործընթացներ պետք է իրականացվեն: Դասընթացներ կմատուցվեն տեղական մարմիններին ու համայնքին, ինչպես նաեւ ծառայություններ մատուցող հկ-ներին: Կմշակվեն սխեմաներ, համաձայն որոնց տեղացիները կկարողանան օգտվել ծրագրի օգուտներից:
Արտադրողականության բարձրացումը կարող է տեղի չունենալ բուն ծրագրի ժամանակահատվածում, ինչը կարող է հանգեցնել տեղացիների հիասթափությանը, հատկապես, երբ ռեզենտացիայի համար նախատեսված տարածքները մուտքի սահմանափակում ունենան:	Միջին	Ծրագրի ֆինանսավորումը կներդնի ներքեւից-վերեւ մոտեցումը՝ թույլ տալով որ, օրինակ, նույնիսկ նախարականներն ընկալեն ծրագրի նպատակը եւ ստեղծելով այնիպիսի մեխանիզմներ եւ կարողություններ, որոնցով ընդհանուր ռեսուրսների օգտագործման եւ կառավարման որոշումներ ընդունվեն: Արոտավայրերի կառավարման վերաբերյալ առաջարկները կլրացվեն տեղում իրականացվող գործողություններով որպես ցուցադրական ծրագրեր, որոնցում ներգրավված կլինի նաեւ տեղական աշխատուժը:
Տնտեսական զարգացումը երկրում դանդաղում է, ծրագրի	Ցածր	Կա ռեալ հնարավորություն, որ սա կարող է տեղի ունենալ. սակայն ծրագրի

տարածքներում աղքատության մակարդակը բարձրանում է՝ դրանով հանդերձ մեծացնելով բացասական ազդեցությունը բնական ռեսուրսների վրա:		գործողությունները կունկրես տեղանքի վրա կենրոնացնելով եւ համայնքների հետ աշխատելով կարելի է նպաստել, որ տեղական տնտեսությունն պատշաճորեն զարգանա եւ լճացման համընդհանուր ազդեցությունը մեղմվի:
Ազգային ռազմավարություններն արագ չեն որդեգրում ծրագրի տարածքներում գրանցված հաջողությունները:	Միջին	Ծրագիրը կօգտագործի բոլոր հնարավոր մեխանիզմները, որպեսզի խաղված դասերը փոխանցվեն ազգային մակարդակի ռազմավարություններ: Որտեղ հնարավոր է, ծրագիրը կլրացնի առկա մեխանիզմները փոխանցումը ներքեւից վերեւ կազմակերպելու համար, օրինակ, կազմակերպելով աշխատանքային խմբերի հանդիպումներ, սեմինարներ կամ լոբբիստական գործունեություն:
Տեղացիների համար մատչելի չեն նոր տեխնոլոգիաները եւ լավագույն պրակտիկան:	Ցածր	Ծրագիրը կմշակի կրթական մոդուլներ եւ փաթեթներ, ինչպես նաեւ կօգտագործի հարակից ծառայությունների կրթական նյութերը:

## 7. Մոնիտորինգի եւ հաշվետվությունների համակարգը

ՄԱԶԾ ուղեցույցում արտացոլված ծրագրային քաղաքականությունների եւ ընթացակարգերի, ինչպես նաեւ ԵՀ սկզբունքների համաձայն՝ ծրագրիը տարեկան ցիկլի շրջանակում կենթարկվի մոնիտորինգի հետեւյալ կետերով.

- *Ծրագրի առաջընթացը մոնիտորինգի կենթարկվի ըստ ՄԱԶԾ Արդյունքների վրա հիմնած կառավարման պլատֆորմի (ERBM)*
- *Եռամսյակային կտրվածքով կիրականացվի որակական գնահատում, որը, համաձայն Որակի մասին բաժնում արտացոլված որակական չափանիշների եւ մեթոդների, կարձանագրի, թե առանցքային արդյունքներին հասնելու հետ կապված ծրագրի մեկնարկից ի վեր ինչ առաջընթաց կա: Սա կզետեղվի ERBM-ի ծրագրի կարգավիճակի բաժնում:*
- *Ատլասում կբացվի Խնդիրների բաժին, որը պարբերաբար կլրացվի Ծրագրի ղեկավարի կողմից, ինչը կօգնի հետեւել առաջացած խնդիրներին եւ հետամուտ լինել դրանց լուծմանն ու անհրաժեշտ փոփոխություններ առաջադրելուն:*
- *Նախապես ներկայացված ռիսկերի մատրիցի հիման վրա (տես՝ Գլուխ 6) Ատլասում կբացվի եւ պարբերաբար կլրացվի Ռիսկերի բաժինը, որտեղ*

կգրանցվի, թե ծրագրի իրականացման վրա ինչ արտաքին գործոններ կարող են ազդել:

- Կբացվի եւ պարբերաբար կլրացվի Քաղված դասերի բաժինը, որտեղ կարձանագրվեն ծրագրի ընթացքում քաղված դասերը եւ կազմակերպության ներսում կատարված փոփոխությունները: Սա նաեւ կօգնի, որ դրանք Ծրագրին ավարտին ամբողջական ձեւով տարածվեն:
- Ատլասում կբացվի Մոնիտորինգի ժամանակացույց, որտեղ պարբերաբար կլրացվեն կարեւոր գործողություններն ու միջոցառումները:

### Ծրագրի տարեկան վերանայում եւ հաշվետվություն

Օրացուցային տարվա չորրորդ եռամսյակի ավարտին կամ հաջորդ տարվա հենց սկզբին կանցկացվի ծրագրի տարեկան վերանայումը, որը կգնահատի ծրագրի կատարողականը եւ հաջորդ տարվա Տարեկան աշխատանքային պլանը: Վերջին տարում այս վերանայումը կլինի ծրագրի վերջնական գնահատումը: Վերանայումը պատվիրում է Ծրագրի խորհուրդը եւ կարող է ներառել այլ շահագրգիռ կողմերի: Դրա խնդիրն է արձանագրել, թե ծրագրի անմիջական արդյունքներն ապահովելու ուղղությամբ ինչ առաջընթաց կա եւ արդյոք դրանք համադրելի են ծրագրի վերջնական արդյունքների հետ: Ծրագրի վերանայման հաշվետվությունը պատրաստում է ծրագրի ղեկավարը եւ ներկայացնում Ծրագրի խորհրդին, Արդյունքների գնահատման խորհրդին և Բրատիսլավայի գրասենյակ՝ տարածաշրջանային համակարգման օղակին: Ծրագրի տարեկան հաշվետվությունը պետք է ընդգրկի ողջ օրացուցային տարին եւ ներառի / բայց ոչ սահմանափակվի / հետեւյալ բաժինները:

*Բաժին 1. Ե՛՛ ծրագրի եւ երկրում իրավիճակի հակիճ ամփոփում*

*Բաժին 2ա. Ծրագրի նպատակների եւ արդյունքների նկատմամբ առաջընթացը, յուրաքանչյուրի համար՝ չափման ցուցանիշները, մեկնարկային տվյալները եւ ծրագրի ավարտի համար նախատեսված թիրախները (կուտակային)*

*Բաժին 2բ. Ծրագրի անմիջական արդյունքներն ըստ վերջնական արդյունքների (տարեկան):*

*Բաժին 2գ. Տվյալ տարվա յուրաքանչյուր անմիջական արդյունքի համար իրականացված գործողությունները*

*Բաժին 3ա. Քաղված դասերը/լավագույն փորձը*

*Բաժին 3բ. Առաջ եկած դժվարությունները եւ դրանք հաղթահարելու համար ձեռնարկված միջոցները*

*Բաժին 4. Ծախսերի հաշվետվություն (Ֆինասնական հաշվետվությունները պետք է ներկայացվեն ԱՄՆ դոլարով)*

*Բաժին 5ա. Ռիսկերն ու հարմարվողականության կառավարում*

*Բաժին 5բ. Գործողությունների, անմիջական արդյունքների կամ ցուցանիշների հետ կատարված փոփոխությունները*

*Բաժին 6. Հետագա աշխատանքային պլան - Հաջորդ 12 ամսվա (օրացուցային տարվա) աշխատանքային պլանը, այդ թվում՝ նպատակներին հասնելու կանխատեսված առաջընթացը եւ չափման ցուցանիշները, ինչպես նաեւ ֆինանսական պլանը (հաջորդ 12 ամիսների բյուջեն ԱՄՆ դոլարով):*

Ծրագրի այն աշխատողների աշխատանքային ծախսերը, ովքեր աշխատում են նաեւ ՄԱԶԾ ազգային գրասենյակի այլ ծրագրերում, կփակվեն միայն տվյալ ծրագրում ներդրված աշխատանաժամանակի մասով: Այդ նպատակով կներդրվեն եւ կլրացվեն աշխատաժամանակի աղյուսակներ, որոնք կներկայացվեն ԵՀ-ին:

#### *Ծրագրի մեկնարկային փուլը*

Ծրագրի ողջ անձնակազմի, կառավարության գործընկերների, իրականացնող գործընկերների, ՄԱԶԾ ազգային գրասենյակի եւ դոնոր կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ կանցկացվի ծրագրի մեկնարկային սեմինար, որի հիմնական նպատակը կլինի օժանդակել ծրագրի աշխատակազմին որդեգրել ծրագրի նպատակները, ինչպես նաեւ վերջնականացնել ծրագրի տարեկան աշխատանքային պլանը:

Բացի այդ, մեկնարկային սեմինարի նպատակներից կլինի: (i) ծանոթանալ ծրագրի անձնակազմին, (ii) սահմանել յուրաքանչյուրի դերը, օժանդակ ծառայությունները եւ ՄԱԶԾ ազգային գրասենյակի փոխլրացնող պարտականությունները, (iii) ներկայացնել ծրագրի հաշվետվության եւ մոնիտորինգի ու գնահատման պահանջները: Մեկնարկային սեմինարը նաեւ հնարավորություն կտա ծրագրի անձնակազմին ներկայացնել ՄԱԶԾ բյուջետային պլանավորման, բյուջեի վերանայման, բյուջեի ժամկետների պարտադիր փոփոխման սկզբունքները: Մեկնարկային սեմինարը կնախապատրաստի բնական ռեսուրսների գծով ՄԱԶԾ տարածաշրջանային տեխնիկական խորհրդատուն (Բրատիսլավա): Մեկնարկային սեմինարը նաեւ լավ հնարավորություն կտա, որ բոլոր կողմերը ծրագրի որոշումների կայացման կառուցվածքում հստակ հասկանան իրենց դերը, գործառույթները, պարտականությունները, ինչպես նաեւ տեղյակ լինեն հաշվետվության եւ հաղորդագրության կանոններին, վեճերի լուծման մեխանիզմներին:

#### *Ծրագրի միջնաժամկետ ցիկլը*

Ծրագրի իրականացման ժամանակահատվածի մեջտեղում կանցկացվի անկախ միջնաժամկետ գնահատում: Միջնաժամկետ գնահատումը կբացահայտի, թե վերջնական արդյունքներին հասնելու ուղղությամբ ինչ առաջընթաց կա եւ ցուցումներ կտա ծրագրի ուղին փոխելու կամ շարունակելու հետ կապված: Միջնաժամկետ

գնահատումը կկենտրոնանա ծրագրի իրականացման արդյունավետության, օգտավետության, ժամանակային պատեհության վրա, կընդգծի այն խնդիրները, որոնք պահանջում են որոշումների կամ գործողությունների ձեռնարկում, կներկայացնի ծրագրի կառուցվածքի, իրականացման եւ կառավարման հետ կապված դասերը:

Այս զեկույցի արդյունքները կներառվեն ծրագրի երկրորդ կեսի իրականացման առաջարկների մեջ: Միջնաժամկետ գնահատման տեխնիկական հանձնարարականը կկազմի ՄԱԶԾ ազգային գրասենյակը՝ հիմնվելով ԵՀ տարածաշրջանային համակարգող գրասենյակի ցուցումների վրա: Ծրագրի ղեկավարության արձագանքի հետ մեկտեղ գնահատումը կներբեռնվի ՄԱԶԾ ներքին համակարգի մեջ հետեւյալ հղումով՝ [UNDP Evaluation Office Evaluation Resource Center \(ERC\)](#):

### Ծրագրի ավարտը

Համաձայն ՄԱԶԾ եւ ԵՀ ցուցումների՝ Ծրագրի խորհրդրդի ավարտական հանդիպումից երեք ամիս առաջ կանցկացվի ծրագրի վերջնական գնահատումը, որի առանցքային նպատակը կլինի ստուգել՝ արդյո՞ք ծրագրի արդյունքներն ապահովվել են ըստ պլանավորածի (եւ ըստ միջնաժամկետ գնահատման մեջ նշված ճշգրտումների): Վերջնական գնահատումը կուսումնասիրի արդյունքների տված ազդեցությունը եւ դրանց շարունակականությունը, այդ թվում՝ ծրագրի նպաստը կարողությունների զարգացման եւ բնապահպանական գլոբալ օգուտների/նպատակների ապահովման գործում: Այս գնահատման տեխնիկական հանձնարարականը կպատրաստի ՄԱԶԾ ազգային գրասենյակը՝ Բրատիսլավայում ՄԱԶԾ տարածաշրջանային համակարգող գրասենյակի ցուցումների հիման վրա: Վերջնական գնահատման մեջ պետք է ներառվեն նաեւ ծրագրի ավարտից հետո իրականացվելիք գործողությունների վերաբերյալ առաջարկներ: Գնահատումը կպահանջի նաեւ ծրագրի ղեկավարության արձագանքը, որը պետք է ներբեռնվի ՄԱԶԾ ներքին համակարգի մեջ (PIMS եւ [UNDP Evaluation Office Evaluation Resource Center \(ERC\)](#)).

- Ծրագրի վերջին երեք ամիսներին աշխատակազմը կպատրաստի ծրագրի վերջնական հաշվետվությունը: Այս համապարփակ հաշվետվությունը կամփոփի արձանագրված արդյունքները (նպատակները, անմիջական եւ վերջնական արդյունքները), դասերը, առաջ եկած խնդիրները եւ այն ասպարեզները, որտեղ արդյունքներ չեն բձանագրվել: Հաշվետվությունը նաեւ առաջարկներ կներկայացնի հետագա այն քայլերի հետ ապված, որոնք անհրաժեշտ են ծրագրի արդյունքների շարունակականությունը եւ կրկնելիությունն ապահովելու, ԵՄ ֆինանսավորման տեսանկյունից պահպանելու, ինչպես նաեւ գույքի կամ այլ ակտիվների փոխանցման համար: Այն նաեւ կպարունակի մանրամասներ ծրագրի եկամուտների եւ ծախսերի, ստացված վճարումների մասին՝ համաձայն Հավելված II-ի Հոդված 2.5-ի (Ընդհանուր պայմաններ): Վերջնական հաշվետվությունը պետք է ներկայացվի ծրագրի ավարտից, ոչ ուշ, քան 3 ամիս հետո:

### 7.1 Դասեր եւ գիտելիքի փոխանցում

Ծրագրի արդյունքները կհրապարակվեն ծրագրի անմիջական միջամտության գոտում եւ դրանից դուրս տեղեկատվության տարածման ցանցերի եւ ֆորումների միջոցով: Ծրագիրը կբացահայտի եւ կմասնակցի համապատասխան գիտական, քաղաքականության մշակման եւ այլ աշխատանքային խմբերի աշխատանքներին, որը կարող է ծրագրին օգուտ տալ դրանցից քաղված դասերի առումով: Ծրագիրը կբացահայտի, կվերլուծի եւ կտարածի ծրագրի ընթացքում ձեռք բերված դասերը, որոնք կարող են հետագայում նման ծրագրերի կազմման եւ իրականացման համար օգտակար լինել: Եվ վերջապես, ծրագրի եւ նմանատիպ այլ ծրագրերի միջեւ կլինի տեղեկատվական փոխադարձ փոխանակում:

### 7.2 Ծրագրի արդյունքների որդեգրումը եւ գույքի սեփականության ընդունումը

Ծրագրի արդյունքների որդեգրման, սեփականության, արդյունաբերական եւ մտավոր սեփականության իրավունքների, ինչպես նաեւ ծրագրի հաշվետվությունների եւ այլ փաստաթղթերի հետ կապված հարցերը տնօրինվելու են ՄԱԶԾ-ի կողմից: Ամեն դեպքում երրորդ կողմի տնօրինմանը դրանք կարող են հանձնվել միայն ՄԱԶԾ համաձայնությամբ:

Ծրագրի շրջանակներում գնված գույքը, մեքենաները եւ այլ պարագաները, որոնց համար վճարել է ԵՄ-ն, պետք է փոխանցվեն տեղական ինքնակառավարման մարմիններին կամ ՄԱԶԾ գործընկերներին (բացառությամբ առևտրային կապալառուներից) կամ ծրագրի արդյունքների վերջնական շահառուներին՝ առնվազն վերջնական հաշվետվության համաձայն: Այս գործարքների փաստաթղթերը, ինչպես նաեւ մնացած բոլոր փաստաթղթերը պետք է պահվեն հետագայի համար, ինչպես նշված է ԵՄ Ընդհանուր պայմանների Հոդված 16.3-ում:

### 7.3 Աուդիտ

Ծրագրի աուդիտը կանցկացվի ՄԱԶԾ աուդիտային կանոնակարգի համաձայն իրավաբանորեն ճանաչված անկախ աուդիտորի կողմից, որի ընտրությունը նույնպես կկատարվի ՄԱԶԾ կանոնակարգի եւ գործընթացների համաձայն կամ եթե/երբ ԵՀ-ն պահանջի աուդիտի անցկացում:

## **8. Հաղորդակցություն, տեսանելիություն, թափանցիկություն**

Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորված ծրագրերի համար ՄԱԶԾ-ն կձեռնարկի համապատասխան միջոցներ՝ հստակորեն հրապարակելու, որ ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Մամուլին, ծրագրի շահառուներին տրված տեղեկատվությունը, հրապարակային նյութերը, պաշտոնական ծանոթագրությունները, հաշվետվություններն ու տպագիրը նյութերը պետք է պարունակեն տեղեկատվություն այն մասին, որ ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից եւ պետք է պատկերեն ԵՄ լոգոն (տասներկու դեղին աստղերը կապույտ ֆոնին): Բոլոր այն դեպքերում, երբ ծրագրի շրջանակներում գնվել են ավտոմեքենաներ, սարքավորումներ

եւ խոշոր ապրանքներ, ՄԱԶԾ-ն ֆինանսավորման աղբյուրի մասին տեղեկատվություն կտեղադրի դրանց վրա՝ լոգոյի հետ միասին՝ ապահովագրելով, որ դա չվտանգի ՄԱԶԾ արտոնություններն ու անձեռնմխելիությունը, ինչպես նաեւ ՄԱԶԾ անձնակազմի անվտանգությունը: Տեղեկատվության գետեղումը պետք է արվի այնպես, որ դրա չափսը եւ լոգոն շփոթություն չառաջացնեն որպես ՄԱԶԾ ծրագիր, որ սարքավորումներն ու ապրանքները պատկանում են ՄԱԶԾ-ին եւ որ ծրագրին տրվեն ՄԱԶԾ արտոնություններն ու անձեռնմխելիությունը:

ՄԱԶԾ բոլոր հրապարակումները, որոնք կատարվել են ԵՀ ֆինանսավորմամբ, անկախ ձեւից ու միջավայրից, այդ թվում՝ ինտերնետում, պետք է պարունակեն հետեւյալ նշումը. «Սույն փաստաթուղթը ստեղծվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ, դրանում արտահայտված մտքերը որեւէ կերպ չեն արտահայտում ԵՄ կարծիքը»: Անհրաժեշտության դեպքում ԵՄ կատարած ներդրումի չափը կարող է եվրոյով նշվել գրառման կողքին՝ փակագծերում (€ կամ եվրո):

Ծրագրի հաղորդագրության ռազմավարությունը կապահովի, որ ծրագրի աշխատակազմը եւ բոլոր շահագրգիռ կողմերը պահպանեն թափանցիկության եւ բաց լինելու բարձր մակարդակ: ՄԱԶԾ-ԵՄ համաձայնագրի՝ «Clima East» մաս 2-ի մյուս ծրագրերի ու գործողությունների հետ համապատասխանությունն ու համակարգում ապահովելու նպատակով ծրագիրը բոլոր շահագրգիռ կողմերին տեղյակ կպահի ծրագրի զարգացումների ու ընթացքի, առաջիկա հանդիպումների մասին եւ կտրամադրի համապատասխան փաստաթղթեր, արձանագրություններ, մամլո հաղորդագրություններ, զեկույցներ, հրապարակումներ եւ վեբկայքի հղումներ: Տեղեկատվությունը ԵՀ-ին կհաղորդվի ՄԱԶԾ տարածաշրջանային կենտրոնի միջոցով: Եվրահանձնաժողովը ՄԱԶԾ-ին կտրամադրի տեղեկություններ ԵՄ քաղաքականության զարգացումների, գործընկերությունների եւ համագործակցության համաձայնագրերի մասին եւ կապահովի, որ դրանք համապատասխանեն ծրագրի արդյունքներին, իսկ արդյունքները բավարարեն դրանց պահանջները:

## **9. Իրավական համատեքստ**

Այս փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ ՄԱԶԾ-ի միջեւ համագործակցության ծրագրի գործողությունների պլանի [ՀԾԳՊ/CPAP] հետ միասին ստորագրվել է Կառավարության եւ ՄԱԶԾ- կողմից եւ համարվում Ծրագրի հիմնական փաստաթուղթ, եւ ինչպես նշվում է Հիմնական աջակցության ստանդարտ համաձայնագրի [ՀԱՍՀ/SBAA] մեջ, ՀԾԳՊ-ի բոլոր դրույթները վերաբերում են նաեւ այս փաստաթղթին:

ՀԱՍՀ-ի 3-րդ հոդվածի համաձայն՝ ծրագիրն իրականացնող գործընկերոջ, աշխատակազմի եւ գույքի, ինչպես նաեւ գործընկերոջ տիրապետման տակ գտնվող ՄԱԶԾ գույքի ապահովությունն ու անվտանգությունը ծրագիրն իրականացնող գործընկերոջ պատասխանատվության տակ են:



Ծրագիրն իրականացնող գործընկերը՝

- պետք է ստեղծի անվտանգության պատշաճ պլան եւ իրագործի այն՝ հաշվի առնելով երկրում անվտանգության իրավիճակը.
- պետք է ստանձնի անվտանգության հետ կապված բոլոր ռիսկերն ու պարտավորությունները, ինչպես նաեւ անվտանգության պլանի լիակատար իրագործումը:

ՄԱԶԾ-ն իրավունք է վերապահում ստուգել՝ արդյոք այդ պլանը կազմվել է, թե ոչ, եւ անհրաժեշտության դեպքում առաջարկել փոփոխություններ: Անվտանգության պատշաճ պլան չունենալը կամ այն ձախողելը կհամարվեն սույն համաձայնագրի խախտում: Ծրագիրն իրականացնող գործընկերը համաձայնում է ձեռնարկել ամեն տեսակի ողջամիտ միջոց՝ ապահովելու, որ ՄԱԶԾ-ից ստացված գումարներն օգտագործվում են Ծրագրի փաստաթղթին համաձայն եւ չեն տրամադրվելու ահաբեկչության հետ կապ ունեցող անհատների կամ սուբյեկտների եւ որ որեւէ գումար ստացած անձ չհայտնվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 (1999) բանաձեւում նշված ցանկում: Այս ցանկը հասանելի է հետեւյալ հասցեով՝ <http://www.un.org/Docs/sc/committees/1267/1267ListEng.htm>: Սույն դրույթը պետք է ներառվի Ծրագրի շրջանակներում կնքված բոլոր կապալային պայմանագրերի կամ ենթահամաձայնագրերի մեջ:

**ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Միջանկյալ արդյունքներ և ցուցիչներ	Միջանկյալ արդյունքներին և ցուցիչներին հասնելու ժամանակացույց	Գործողությունների հաջորդականությունը
<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b> <b>Թիրախային տարածքի պաշարների գույքագրում և խոցելիության գնահատում, որոնց արդյունքում կմշակվեն արոտավայրերի և անտառի վերականգնման պլաններ:</b></p> <p><b>Բազային իրավիճակը.</b> Գյուղական համայնքները և անտառտնտեսության կառավարման մարմինները սահմանափակ պատկերացում ունեն անտառների և արոտավայրերի կայուն կառավարմանը միտված ներկա վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմման միջոցառումների վերաբերյալ:</p> <p><b>Նպատակ 1.</b> Ընտրված արոտավայրերի և անտառների էկոհամակարգերի դեպքում բացահայտվել և գնահատվել են հիմնական բացասական խթանները:</p> <p><b>Ցուցիչ 1.</b> Համայնքային զարգացման ծրագրերի քանակը, որտեղ ներառված են կլիմայի փոփոխության ոլիսկերը:</p> <p><b>Ցուցիչ 2.</b> Որոշում կայացնողների և համայնքների անդամների քանակը, ովքեր ընդլայնել</p>	<p><b>2013 թվական</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Մշակվել են պիլոտային վայրերի ընտրության չափանիշները, և ընտրվել են համայնքները.</li> <li>- Ընտրված համայնքների համար մշակվել են խոցելիության նկարագրեր.</li> <li>- Իրականացված տեղեկատվական քարոզարշավների և անցկացված «կլոր սեղան» քննարկումների քանակը համապետական, մարզային և տեղական մակարդակներում.</li> <li>- Մշակվել է առկա բացերի վերլուծությունը ներկայացնող հաշվետվություն, արվել են առաջարկություններ:</li> </ul> <p><b>2014 թվական</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Արոտավայրերի և անտառների վերականգնման պլանների մշակում և հաստատում.</li> <li>- Տեղական մակարդակում որոշումներ ընդունողների և համայնքների անդամների համար կլիմայի փոփոխության հետեւանքով վտանգների և դրանք մեղմելու եղանակների վերաբերյալ անցկացված դասընթացների քանակը.</li> <li>- Առնվազն երեք համայնքում կլիմայի փոփոխության հետեւանքով առաջացող ռիսկերը ներառվել են համայնքային զարգացման բազմամյա ծրագրերում:</li> </ul> <p><b>2015 թվական</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Տեղական մակարդակում հաստատվել է արոտավայրերի</li> </ul>	<p>1.1 Պիլոտային համայնքների ընտրության կատարում:</p> <p>1.2 Ռեսուրսների դաշտային գույքագրման անցկացում և ընտրված արոտավայրերի ու անտառային էկոհամակարգերի խոցելիության մանրակրկիտ նկարագրերի մշակում:</p> <p>1.3. Սոցիալ-տնտեսական և բնապահպանական գնահատման իրականացում:</p> <p>1.4. Իրազեկման մակարդակը, կարողությունները և կարիքները գնահատելու նպատակով մասնակցային հանդիպումների անցկացում ընտրված համայնքներում:</p> <p>1.5. Գյուղատնտեսության ոլորտում ազգային/ տեղական զարգացման ռազմավարությունների և պլանների բացերի վերլուծության իրականացում՝ հաշվի առնելով կենսաբազմազանության պահպանության և կլիմայի փոփոխության հարցերը:</p> <p>1.6 Ազգային/ տեղական քաղաքականություններում և ծրագրերում առաջարկությունների և լրացումների փաթեթի մշակում՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության խնդիրները:</p> <p>1.7. Անտառների և արոտավայրերի վերականգնման պլանների տեխնիկական նախագծի համառոտ նկարագրության մշակում:</p> <p>1.8 Արոտավայրերի և</p>

<p>են կլիմայի փոփոխության պայմաններում լեռնային արոտավայրերի եւ անտառային էկոհամակարգերի կենսակայուն օգտագործման վերաբերյալ իրենց կարողությունները եւ գիտելիքը:</p>	<p>կայուն կառավարմանը վերաբերող քաղաքականությունների եւ ստանդարտների նոր համախումբ (թիրախային տարածքներում տեղական իշխանությունների կողմից)</p>	<p>անտառների կայուն կառավարման թեմայով ուսումնական մոդուլների մշակում եւ դասընթացների անցկացում ազգային եւ տեղական մակարդակներում որոշումներ կայացնողների համար</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 2. Անտառների եւ արոտավայրերի վերականգնման ծրագրերի իրականացում</b> <b>Բազային իրավիճակը.</b> Հայաստանում գոյություն չունեն ցուցադրական նախագծեր, որոնք ուղղված կլինեն լեռնային արոտավայրերի եւ անտառային էկոհամակարգերի վերականգնմանը՝ նպատակ ունենալով մեծացնել ածխածնի պաշարը:</p> <p><b>Նպատակ: 1.</b> Լեռնային արոտավայրերի հողերը եւ դեգրադացված անտառային էկոհամակարգերը վերականգնվել են, իսկ ածխածնի պաշարը պահպանվել եւ ընդլայնվել է:</p> <p><b>Ցուցիչ 1.</b> Վերականգնված արոտավայրային հողերի եւ վերականգնված դեգրադացված անտառների մակերեսը (հեկտար):</p> <p><b>Ցուցիչ 2.</b> Վերականգնված պիլոտային տարածքներում ածխածնի պահուստավորման կարողության աճը (տոկոս):</p>	<p><b>2014 թվական</b></p> <p>- Արոտավայրերի օգտագործման պլանները, ներառյալ մոնիտորինգի մեխանիզմը, մշակվել են մասնակցային խորհրդակցությունների միջոցով եւ իրականացվել:</p> <p><b>2014 թվական</b></p> <p>- Մեկնարկել է 2000 հա մակերեսով դեգրադացված արոտավայրերի վերականգնումը:</p> <p>- Իրականացվել է աջակցություն դեգրադացված եւ հատված անտառային տարածքներում (60 հա) բնական ռեգեներացիայի եւ անտառվերականգնման գործընթացներին:</p> <p><b>2015 թվական</b></p> <p>- Ավարտին է հասցվել եւ պատշաճ ձեւով պահպանվել արոտավայրային տարածքների վերականգնումը.</p> <p>- Պահպանվել են 60 հա մակերեսով նոր վերականգնված/ տնկված անտառներ:</p> <p><b>2016 թվական</b></p> <p>- Փորձի կրկնօրինակման քարոզարշավների անցկացում առնվազն 20 այլ համայնքներում:</p>	<p>2.1 Արոտավայրերի կայուն կառավարման պլանները բերվել են վերջնական տեսքի եւ հաստատվել համայնքների ավագանիների կողմից:</p> <p>2.2 Ընտրված տարածքներում անտառների վերականգնման եւ կառավարման պլանները բերվել են վերջնական տեսքի:</p> <p>2.3 Ուսումնական ուղեւորության կազմակերպում:</p> <p>2.4 Անտառների վերականգնման միջոցով ջերմոցային գազերի արտանետման մեղմման փորձնական գործողությունների իրականացում:</p> <p>2.5. Արոտավայրերի վերականգնման գործողությունների իրականացում:</p> <p>2.6 Տեղական բնակչության համար դասընթացների եւ փորձի տարածման (կրկնօրինակման) քարոզարշավների կազմակերպում:</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 3. Ածխածնի առկա</b></p>	<p><b>2013 թվական</b></p> <p>- Ածխածնի կլանման եւ</p>	<p>3.1 Ածխածնի պաշարների գնահատման</p>

<p><b>մակարդակի գնահատում եւ մոնիտորինգի համակարգի ներդրում Բազային իրավիճակը.</b></p> <p>Դեգրադացված լեռնային արոտավայրերում եւ անտառային էկոհամակարգերում գոյություն չունի ածխածնի պաշարի գույքագրման եւ մշտադիտարկման (մոնիտորինգի) փորձ:</p> <p><b>Նպատակային ցուցանիշ 1.</b> Ստեղծվել եւ փորձարկվել է ածխածնի պաշարի գույքագրման եւ մշտադիտարկման ազգային շրջանակ:</p> <p><b>Ցուցիչ 1.</b> Ածխածնի հաշվառման մեթոդաբանությունը ներդրված է եւ իրականացվում է պիլոտային տարածքներում:</p> <p><b>Ցուցիչ 2.</b> Մշակվել եւ կառավարության կողմից հաստատվել է ածխածնի մշտադիտարկման ծրագիրը:</p> <p><b>Ցուցիչ 3.</b> Անցկացված տեղեկատվական քարոզարշավների քանակը:</p>	<p>պահուստավորման կարողության վերաբերյալ ցուցիչների համախմբի լրամշակում:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Ածխածնի պաշարների գնահատման մեթոդաբանության մշակում:</li> <li>- Գործնական հարցման անցկացում բազային իրավիճակի վերհանման նպատակով:</li> </ul> <p><b>2014 թվական</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Ածխածնի մշտադիտարկման համակարգի ներդրման նպատակով կարիքների գնահատման հաշվետվության պատրաստում:</li> <li>- Ածխածնի հաշվառման եւ մշտադիտարկման մեթոդաբանության ներդրում:</li> </ul> <p><b>2015/2016 թվականներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Վերականգնման ավարտից հետո արոտավայրերի եւ անտառագուրկ հողերի մոնիտորինգային հետազոտության իրականացում:</li> <li>- Մշակվել է կրկնօրինական ռազմավարություն, եւ լավագույն փորձի ու մոտեցումների արդյունքները լայնորեն տարածվել են երկրի ողջ տարածքով:</li> <li>- Կազմակերպվել է առնվազն 6 համապետական աշխատաժողով եւ 25 հանրային քարոզարշավ տեղական մակարդակում, պատրաստվել են հրատարակություններ եւ տարածվել ազգային, մարզային եւ տեղական մակարդակներում:</li> </ul>	<p>մեթոդաբանության մշակում:</p> <p>3.2 Արոտավայրի եւ դեգրադացված անտառային հողերի ածխածնային ներուժի վերաբերյալ գործնական հարցման փորձարկում եւ ետծրագրային մշտադիտարկում</p> <p>3.3 Ածխածնի մշտադիտարկման համակարգի ներդրման համար իրավական եւ ինստիտուցիոնալ բացերի եւ խոչընդոտների վերհանում եւ ազգային կարողությունների կարիքների գնահատման իրականացում:</p> <p>3.4 Ածխածնի մշտադիտարկման ազգային համակարգի ստեղծման համար առաջարկությունների ներկայացում:</p> <p>3.5 Իրազեկման ընդլայնում եւ ծրագրի փորձի տարածում (կրկնօրինակում) (աշխատաժողովներ շահագրգիռ կողմերի հետ եւ հանրային լսումներ համապետական եւ տեղական մակարդակներում, տեղեկատվական նյութերի հրատարակում եւ տարածում թիրախային տարածքներում եւ երկրի այլ մասերում):</p>
---	--	--